



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԱՌՕՏ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԾԱԽԻԻՔ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԵԿՈՒՄ

ԿՐԹՈՐԻ ՏՊԱՅՈՒԹԻՒՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱՅՐՈՒԹԻՒՆ ԲԵԵՐԲՃԵԱՆ


1866

2116

Fr. Georg Zumbach. 2. f.

1456 a. *unverändert*






N 3398

ՆԱԽՆԱԿԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԾԱԽԻՒՔ
ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ի ՊԵՇԻԿԱՇ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐՔՉԵԱՆ
1866



Ի ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հայկազեան ընկերութիւնը ջանացած է միշտ որ
Դպրոցաց համար տպել տուած ուսմանց գիրքերը
ժամանակին պահանջած փոփոխութիւններն ունե-
նան : Աս նպատակով Թուաբանութեան Երրորդ
տպագրութիւնն ընել հարկ ըլլալով , գիրքը հեղի-
նակին , Յարգոյ Պատ . Ստեփան Փափազեանի յանձ-
նուեցաւ , որ զայն նորէն աչքէ անցընելով , տեղ տեղ
կարեւոր փոփոխութիւններ երբեմն նաեւ յաւել-
ուածներ ըրած է : Կը յուսանք որ այս տպագրու-
թիւնն ալ նախընթաց տպագրութիւններուն գտած
ընդունելութիւնը կը վայելէ :

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ի ՊԵՇԻԿԱՇ

Կոստանդնուպոլիս . 1866:

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՍՏԱԳԻՐԻՔ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԴԱՍ Ա.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ կ'ըսուի այն գիտութիւնը որ թիւերու վրայ կը խօսի, և կը սորվերցնէ զանոնք կազմել, յայտնել, թուանշաններով ցուցնել, բազազրել, զատել, վերջապէս թիւերու վրայ ամեն տեսակ գործողութիւնն ընել:

2. ԹԻ- կ'ըսուի այսքան նոյնասեռ միութեանց հաւաքումը, զոր օրինակ, մէկ, երկու, հինգ, և այլն:

3. ՄԻՆԻՒՆ կ'ըսուի այն քանակութիւնը որ իր տեսակէն եղող քանակութիւնները չափելու կամ համընդուն համար որոշուած է:

Ինչպէս հինգ հացին միութիւնն է մէկ հաց, եւ թը օխային միութիւնն է մէկ օխաց:

4. ՔԱՆԱԿՈՒՆ կ'ըսուի այն ամեն բանը որ կընայ չափուիլ կամ համընդուն:

ինչպէս տախտակը . ժամանակը . պարտէզը , և այլն :

5. Վերադառնալ ինչպէս կ'ըստուի այն թիւը , որուն միութեան տեսակը յայտնի չէ . զոր օրինակ , հինգ . տասնութութիւն . քսան , և այլն :

6. Թանձրացեալ ինչպէս կ'ըստուի այն թիւը՝ որուն միութեան տեսակը յայտնի է , զոր օրինակ , հինգ մարդ . տասը գրիչ . քսան ու հինգ աղբիւր , և այլն :

7. Նշանակելով կ'ըստուին այն թիւերը , որոնց տեսակները իրարու նման են , զոր օրինակ , չորս ձի . տասը ձի . երեսուն ձի , և այլն : Եթէ թիւը պերկեւիլ , քսանութեկ սերկեւիլ , և այլն :

8. Տարբերելով կ'ըստուին այն թիւերը , որոնց տեսակները իրարու նման չեն . ինչպէս , վեց գրիչ . ութ խնձոր , և այլն : Հինգ զուրուշ . քսան մարդ , և այլն : Երկու էնտաղէ . երեք թուղթ , և այլն :

9. Ամբողջ կ'ըստուին այն թիւերը , որոնց մէջ միայն ամբողջ միութիւններ կան , զոր օրինակ , վեց խնձոր . չորս զուրուշ , և այլն :

10. Կոդիֆիկացելով կ'ըստուին այն թիւերը , որոնց մէջ ամբողջ միութիւններէ զատ՝ նոյն միութեանց մասերն ալ կը գտնուին , զոր օրինակ , երկու օխայ ու կէս . երեք ժամ երեք քառորդ , և այլն :

ԴԱՍ Բ.

ԱՄԲՈՂՋ ԹԻԻԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՒ ՅԱՅՏՆԵԼՈՒ ՎՐԱՅ

11. Միութիւնն իր վրայ յաջորդաբար աւելնալով ամբողջ թիւերը կը կազմուին, զոր օրինակ, նոյնատեսակ միութիւն մը ուրիշ նոյնատեսակ միութեան մը վրայ աւելնալով՝ երկու թիւը կը կազմուի. այս թուոյն վրայ ուրիշ միութիւն մ'ալ աւելցնելով, նոր թիւ մ'ալ կը կազմուի և կ'ըսուի երէ, և այսպէս շարունակաբար:

Ուսկից կը հետեւի թէ թիւերն անհուն են, վասն զի որչափ մեծ ըլլայ թիւ մը, կըրնանք դարձեալ միութիւն մ'աւելցնելով՝ աւելի մեծ թիւ մը կազմել:

12. Արդ բոլոր թիւերը խօսքով յայտնելու համար քանի մը յատուկ բառեր հնարուած են, վասն զի անկարելի է ամեն մէկ թիւին առանձին անուն տալ:

Առջի մարդիկ իրենց մատերուն վրայ հաշուել սկսած են, հետեւաբար առանձին անուններ տուած են իրենց մատերուն վրայ համրած թիւերնուն, որ ասոնք են.

մէկ.	երկու.	երեք.	չորս.	հինգ.
վեց.	եօթը.	ութը.	ինը.	տասը:

Տասը թուոյն հասնելէն վերջը, այս տաս

նին երբորդ իւրի յո-ւն-ն կամ պատահար անուն տուած են , և կրկին անգամ սկսած են համ-րել իրենց մատերուն վրայ այսպէս .

Մէկ տասնաւոր	կամ	տասը .
Երկու տասնաւոր	))	քսան .
Երեք տասնաւոր	))	երեսուն .
Չորս տասնաւոր	))	քառասուն .
Հինգ տասնաւոր	))	յիսուն .
Վեց տասնաւոր	))	վաթսուն .
Եօթը տասնաւոր	))	եօթանասուն .
Ութը տասնաւոր	))	ութսուն .
Ինը տասնաւոր	))	իննսուն .
Տասը տասնաւոր	))	հարիւր :

Բայց երկու անընդ-միջական տասնաւոր-ներու մէջ տեղն ինը հատ միջին թիւեր կան , որոնց անունները կազմելու համար ինը տաս-նաւորներուն ամեն մէկուն վրայ նախընթաց ինը միաւոր թուոց անուններն աւելցնելու է այսպէս .

Տասըմէկ, տասներկու, տասներեք տասնընը .
 Քսանմէկ, քսաներկու, քսաներեք քսանընը .
 Երսունմէկ, երսուներկու, երսուներեք երսունընը .

 Իննսունմէկ, իննսուներկու, իննսուներեք իննսունընը :

Իննսունընը թուոյն վրայ միութիւն մ'ալ աւելցնելով կ'ըլլայ տասը տասնաւոր , որուն կ'ըսուի երբորդ իւրի յո-ւն-ն կամ հարիւրաւոր , զոր միաւոր առ միաւոր , տասնաւոր առ տասնա-

ւոր համրածնուս պէս համրելով կ'ունենանք .

Մէկ հարիւրաւոր	կամ	հարիւր.
երկու հարիւրաւոր	,,	երկու հարիւր.
երեք հարիւրաւոր	,,	երեք հարիւր.

.....

Տասը հարիւրաւոր	,,	հազար:
-----------------	----	--------

Բայց երկու անընդ-միջական հարիւրաւոր-ներու մէջ իննսուներինը հատ միջին թիւեր կան, որոնց անունները կազմելու համար՝ ինը հարիւրաւորներուն ամեն մէկուն վրայ նախընթաց իննսուներինը թուոց անուններն աւելցնելու է այսպէս .

Հարիւր մէկ, հարիւր երկու, հարիւր երեք հարիւր իննսուներինը:

Երկու հարիւր մէկ, երկու հարիւր երկու, երկու հարիւր երեք երկու հարիւր իննսուներինը:

Երեք հարիւր մէկ, երեք հարիւր երկու, երեք հարիւր երեք երեք հարիւր իննսուներինը:

.....

Ինը հարիւր մէկ, ինը հարիւր երկու, ինը հարիւր երեք, ինը հարիւր իննսուներինը:

Ինը հարիւր իննսուներինը թուոյն վրայ միւլթիւն մ'ալ աւելցնելով կ'ըլլայ շրջոյտ. Կարճ Ժողովուրդ կամ հազար, զոր հազարաւոր առ հազարաւոր համրելով կ'ունենանք ,

Մէկ հազարաւոր	կամ	հազար.
Երկու հազարաւոր	,,	երկու հազար.

Երեք հազարաւոր	կամ	Երեք հազար.
.....		
.....		
Տասը հազարաւոր	,,	տասը հազար.
Քսան հազարաւոր	,,	քսան հազար.
Երսուն հազարաւոր	,,	երսուն հազար.
.....		
.....		
Հարիւր հազարաւոր	,,	հարիւր հազար.
Երկու հարիւր հազարաւոր	,,	երկու հարիւր հազար.
Երեք հարիւր հազարաւոր	,,	երեք հարիւր հազար.
.....		
.....		
Տասը հարիւր հազարաւոր	,,	հազար հազար՝ որուն կ'ըսուի միլիօն:

Բայց երկու անընդ-միջական հազարաւորներու մէջ տեղն ինը հարիւր իննսուներինը հատ միջին թիւեր կան, որոնց անունները կաղմելու համար ինը հարիւր իննսուներինը հատ հազարաւորներուն ամեն մէկուն վրայ նախընթաց ինը հարիւր իննսուներինը թուոց անունները աւելցնելու է այսպէս .

Հազար մէկ, հազար երկու, հազար երեք հազար ինը հարիւր իննսուներինը.

Երկու հազար մէկ, երկու հազար երկու, երկու հազար երեք երկու հազար ինը հարիւր իննսուներինը.

.....

Տասը հազար մէկ, տասը հազար երկու տասը հազար ինը հարիւր իննսուներինը.

.....

Հարիւր հազար մէկ, հարիւր հազար երկու . . . հարիւր
հազար ինը՝ հարիւր իննսուներկնր.

Ինչը հարիւր իննսուներինը հազար մէկ, ինը հարիւր իննե-
սուներինը հազար երկու . . . ինը հարիւր իննսուներինը
հազար ինը հարիւր իննսուներինը :

ինը հարիւր իննասունըինը հազար ինը հա-
րիւր իննասունըինը թուոյն վրայ միութիւն մ'ալ
աւելցնելով կ'ըլլայ տասը հարիւր հազար ու
ըուն կ'ըսուի միլիօն, և պիտի համբռնք,

Միլիոն մեկ, միլիոն երկու . . . ինը միլիոն ինը հարիւր
իննսուներինը հազար ինը հարիւր իննսուներինը:

Տասը միլիոն մեկ, տասը միլիոն երկու . . . և այլն:

Հարիւր միլիոն մէկ, հարիւր միլիոն երկու . . . և այլն:

Հաղար միլիօն, որուն կ'ըսուի երկիլիօն:

և այսպէս շարունակաբար:

13. Որով միութեանց զանազան կարգերը այս հետեւեալները կ'ըլլան, այսինքն՝ Ա. միւսւոր, Բ. տասնաւոր, Գ. հարիւրաւոր, Դ. հազարաւոր, Ե. տասը հազարաւոր, Զ. հարիւր հազարաւոր, Է. միլիօնաւոր, Ը. տասը միլիօնաւոր, Թ. հարիւր միլիօնաւոր, Ժ. երկիլիօնաւոր և այլն:

նաւոր , և այլն : Այս կարգերէն ալ միաւորէն սկսեալ երեքական հաս առնելով միութեանց դասերը կը կազմուին , որոնց կ'ըսուի երբայի դաս , և ասոնք են . Ա. միաւոր , Բ. հազարաւոր , Գ. միլիօնաւոր , Դ. երկիւլիօնաւոր , Ե. եռիւլիօնաւոր , և այլն :

ԴԱՍ Գ.

ԹԻԻԵՐԸ ՆՇԱՆԱԳԻԾՈՎ ԳՐԵԼՈՒ ՎՐԱՅ

14. Բոլոր թիւերը ցուցնելու համար տասը հաս նշանադիծներ հնարուած են , որոնց կ'ըսուի թուանշան , և ասոնք են .

1	2	3	4	5
մէկ	երկու	երեք	չորս	հինգ
6	7	8	9	0
վեց	եօթը	ութը	ինը	զրօ

15. Այս թուանշանները չէ թէ միայն մինչեւ ինը , հապա նաեւ բոլոր կարգի միութիւնները կը ցուցնեն , այսպէս՝ առաջին 1 թուանշանը կրնայ ցուցնել մէկ տասնաւոր , մէկ հարիւրաւոր , մէկ հազարաւոր , մէկ հարիւր հազարաւոր , մէկ միլիօնաւոր , և այլն : Երկրորդ 2 թուանշանը կրնայ ցուցնել երկու տասնաւոր , երկու հարիւրաւոր , երկու հազարաւոր . . . և այլն :

Միայն թէ տասնաւորները միաւորներուն հետ չշփոթելու համար, ասանկ յարմար դառնա՞ծ է որ ,

Տասնաւոր ցուցնող թուանշանը միաւոր ցուցնողին ձախ կողմը դրուի . հարիւրաւոր ցուցնողն ալ տասնաւորին ձախ կողմը , հազարաւորն ալ հարիւրաւորին ձախ կողմը , և այլն :

Զոր օրինակ . թէ որ գրել ուզենք յիսուներչորս թիւը , որ հինգ տասնաւոր և չորս միաւոր ըսել է , պէտք է առաջ գրել 4 թուանշանը , յետոյ այս 4 թուանշանին ձախ կողմը 5 թուանշանը գրել , որ տասնաւորները կը ցուցնէ , ասանկով յիսուներչորս թիւը 54 կ'ըլլայ : Այսպէս ալ հինգ հարիւր քսանը վեց թիւը գրելու համար՝ առաջ 6 միաւորը , որուն ձախ կողմը 2 տասնաւորը , ասոր ալ ձախ կողմը 5 հարիւրաւորը դնելով , կ'ըլլայ 526 թիւը :

16. Եթէ թուոյ մը միութեանց այս ինչ կարգը պակսի , ան ատեն վերջին նշանագիծը այսինքն դրօն 0 կը դործածեն՝ այն կարգին տեղը յայտնի ընելու համար . ինչպէս եթէ ուզենք ութսուն գրել , որովհետեւ միաւոր չը կայ՝ անոր համար 8ը 0ին ձախ կողմը կը գրենք՝ որ կ'ըլլայ 80 :

Նոյնպէս պիտի գրենք ,	
հինգ հազար վաթսուն	այսպէս 5060:
քսան հազար վեց	” 20006:
չորս հազար հարիւր քսան	” 4120:

Ուսկից յայտնի կ'երեւայ թէ պէտք եղածէն աւելի թիւերն անդամ գրելու բաւական կ'ըլլան հնարուած տասը նշանագիծները :

17. ԿԱՆՈՆ Ա. Որ և իցէ զըուցուած թիւ մը թուանշաններով գրելու համար պէտք է .

Չախէն գէպի աջ՝ ամենէն վերի կարգի միւս թիւներէն սկսեալ յաջորդաբար միութեանց կարգերը գրել մինչեւ որ միաւորը հասնինք , և պակսած կարգերուն տեղը զրօ դնել :

Օրինակ . Գրել՝ եօթանասուն և ութը միլիօն երեսունըչորս հազար վեց հարիւր ինը թիւը :

Նախ 7 թուանշանը կը գրեմ որ է տասը միլիօնաւոր . ապա աջ կողմը 8 որ է միլիօնաւոր , յետոյ 0 մը հարիւր հազարաւոր չըլլալուն համար . ապա աջ կողմը 5 որ է տասը հազարաւոր , յետոյ 4՝ որ է հազարաւոր , ապա աջ կողմը 6՝ որ է հարիւրաւոր , ապա աջ կողմը 0՝ տասնաւոր չըլլալուն համար . վերջապէս 9 թուանշանն ալ միաւոր կարգը . որով վերը ըսուած թիւը այսպէս կը գրուի 78,054,609 :

18. Մէկ +ւի՝ շրջանակներ . Գրել հետեւեալ թիւերը նշանագիծներով .

Ա. Հարիւր վաթսուն և ութը :

Բ. Հազար հինգ հարիւր քառասուն և ինը :

Գ. Տասը հազար չորս հարիւր իննսուն և ինը :

Դ. Ութը միլիոն քառասուն և եօթը հազար ութը :

Ե. Զորս միլիոն հինգ :

Զ. Երկու միլիոն :

Է. Հինգ հարիւր միլիոն երեսուն և հինգ :

Ը. Մէկ երկիւիոն :

Թ. Երեսուն երկիւիոն հինգ միլիոն ութսուն հազար քառասուն և ութը :

Ժ. Վաթսուն քառիւիոն հարիւր եռիւիոն քառասուն երկիւիոն ութսուն միլիոն հարիւր վաթսուն հազար ինը հարիւր չորս :

ԺԱ. Երկու եռիւիոն ութը միլիոն հարիւր իննսուն հազար եօթանասունը հինգ :

ԺԲ. Հինգ միլիոն քսան և ութը հազար մէկ :

19. ԿԱՆՈՆ Բ. Նախընթաց տասը հատ նշանագիծներով դրուած որ և իցէ թիւ մը կարդալու համար պէտք է .

1. Աջ կողմէն սկսելով նոյն թիւն երեքական թուանշան զատել .

2. Չախ կողմէն սկսելով իրարու ետեւէ ամեն մէկ դասերը մինակ սեպելով կարդալ .

3. Սմեն մէկ դասը կարդալէն անմիջապէս ետքը՝ իրեն անունն ալ ըսել :

Օրինակ . կարդալ 1,570,085,000,140 թիւը :

Վերի կանոնին համեմատ երեքական զատենք, կ'ըլլայ՝

եռիւիոն	երկիւիոն	միլիոն	հազար	միաւոր
1	570	085	000	140

զոր կը կարդանք այսպէս. մէկ եռիլիօն հինգ հարիւր եօթանասուն երկիլիօն. ութսունըհինգ միլիօն հարիւր քառասուն:

Ուսկից յայտնի կ'երեւայ թէ թուոյ մը թուանշաններն որչափ ալ շատ ըլլան, նոյն թիւը կարդալու համար բաւական է երեք թուանշանով թիւ մը կարդալը գիտնալ:

20. Մէկ բանի օրինակներ. կարդալ հետեւեալ թիւերը:

Ա. 50,708

Բ. 47,659,812

Գ. 2,035,478,023

Դ. 8,036,398

Ե. 4,350,708,001

Զ. 25,651,484

Է. 67,689,009,644,886

Ը. 40,000,000

Թ. 2,010,006,896,005

Ժ. 3,703,700,500,125,000

ԴԱՍ Դ.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՆՇԱՆՆԵՐԸ

21. Թուագիտութեան մէջ ըլլալիք հաշիւները գիւրին ձեւերով ցուցնելու համար հետեւեալ նշանները հնարուած են:

(+) Այս նշանը՝ որ է՛ւ կ'ըսուի, իրարու

վրայ աւելնալիք քանակութիւններուն մէջ տեղը կը դրուի, ինչպէս $4+3$ կը ցուցնէ թէ պէտք է 3ը 4ին վրայ դումարել, և կը կարգաւորուի այսպէս չորս եփէլ երեք :

(—) Այս նշանը որ պահաւ կ'ըսուի, իրարմէ հանելիք քանակութիւններուն մէջ տեղը կը դրուի, ձախ կողմը մեծը և աջ կողմը փոքրը, ինչպէս $8-5$ կը ցուցնէ թէ պէտք է 5ը 8էն հանել և կը կարգաւորուի այսպէս չորս պահաւ հինգ :

(×) Այս նշանը՝ որ քաղմապատկեալ կ'ըսուի, իրարու հետ բաղմապատկուելի քանակութիւններուն մէջ տեղը կը դրուի, ինչպէս 2×3 կը ցուցնէ թէ պէտք է 2ը 3ով բաղմապատկել և կը կարգաւորուի այսպէս երկու քաղմապատկեալ երեքով :

(:) Այս նշանը՝ որ բաժանեալ կ'ըսուի, իրարու հետ բաժնուելիք քանակութիւններուն մէջ տեղը կը դրուի, բաժանելին ձախ կողմը և բաժանարարն աջ կողմը, ինչպէս $12:4$ կը ցուցնէ թէ 12ը 4ով պէտք է բաժնել, և կը կարգաւորուի պահանջին բաժանեալ չորսի :

Երբեմն (—) նշանն ալ բաժանման նշանի տեղ կը դործածուի, որուն վրայ կը դրուի բաժանելին և անոր ներքեւն ալ բաժանարար

ըը, ինչպէս $\frac{12}{4}$ ը կը ցուցընէ թէ 12ը 4ով պիտի բաժնուի :

(=) Այս նշանը՝ որ հաւասար կ'ըսուի, իրարու հաւասար եղող քանակութիւններուն մէջ տեղը կը դրուի, ինչպէս $5+3=8$ կը ցուցընէ թէ, երբ 3ը 5ին վրայ գումարուի՝ 8ի հաւասար կ'ըլլայ, և կը կարգացուի հինգ եփէլ երեք հաւասար ուրի :

(>) Այս նշանը՝ որ Ռէ կ'ըսուի, կը դորժածուի երկու անհաւասար քանակութիւններու մէջ տեղ, ձախ կողմը մեծ քանակութիւնը կը դրուի, և աջ կողմն ալ փոքրը, ինչպէս $11>7$ և կը կարգացուի այսպէս 11ը Ռէ է 7ին :

(<) Այս նշանը՝ որ Գր կ'ըսուի, կը դորժածուի դարձեալ երկու անհաւասար քանակութիւններու մէջ տեղը, բայց ձախ կողմը փոքր քանակութիւնը կը դրուի և աջ կողմը մեծը, ինչպէս $5<12$ և կը կարգացուի այսպէս 5ը Գր է 12ին :



ՀԱՐՑԱՐԱՆ

Թուագիտութիւնը ի՞նչ է. — Թիւն ի՞նչ է. — Վերացեալ թիւ ինչի՞ կ'ըսուի. — Ի՞նչ է միութիւնը. — Թանձրացեալ թիւն ի՞նչ է. — Նշանակեալ և տարանշան ըսուած թիւերն իրարմէ ի՞նչ տարբերութիւն ունին. — Ի՞նչ է քանակութիւնը. — Ամբողջ թիւն ի՞նչ է. — Կոտորակաւոր թիւ ըսելով ի՞նչ կ'իմանանք. — Ամբողջ թիւերը ի՞նչպէս կը կազմուին. — Թիւ

ւերը հունաւոր են. — Առջի մարդիկն ի՞նչպէս սկսած են հաշ-
ուել. — Տասը թուոյն հասնելնէս վերջը այս տասնին ի՞նչ ա-
նուն կու տանք. — Երեք տասնաւոր ըսելու տեղ սովորական
ի՞նչ անուն կու տանք. — Երկու անընդմիջական տասնաւորնե-
րու մէջ քանի՞ միջին թիւեր կան, և անոնց անունները կազ-
մելու համար ի՞նչ պէտք է ընել. — Ինը հարիւր իննսուն և
ինը թուոյն վրայ միութիւն մ'ալ աւելցնենք ի՞նչ կ'ըլլայ.
— Երկու անընդմիջական հազարաւորներու մէջ քանի՞ միջին
թիւեր կան, և անոնց անունները կազմելու համար ի՞նչ պէտք
է ընել. — Ինը հարիւր իննսուն և ինը հազար ինը հարիւր
իննսուն և ինը թուոյն վրայ միութիւն մ'ալ աւելցնելով ի՞նչ
կ'ըլլայ. — Քանի՞ միլիօն երկիլիօն մը կը կազմէ. — Քառիլիօնը
ի՞նչ է. — Միութեանց զանազան կարգերն որո՞նք են. — Եր-
րակի դաս ըստածներն որո՞նք են. — Նշանագիծները քանի՞
են և ի՞նչ կ'ըսուի անոնց. — Տասը թուանշանները կրնա՞ն
ամեն կարգի միութիւնները ցուցնել. — Տասնաւորները միա-
ւորներուն և հարիւրաւորներն ալ տասնաւորներուն հետ ևայլն՝
չչփոթելու համար ի՞նչ ընել պէտք է. — Չորս հարիւր ութ-
սուն և հինգ թիւը թուանշաններով գրուի՞. — Յ նշանագիծը
ի՞նչ բանի կը գործածուի. — Երսուն հազար եօթը հարիւր
եօթը գրուի՞. — Ջրուցուած թիւ մը թուանշաններով գրելու
համար ի՞նչ կանոն ունինք. — Մէկ երկիլիօն քառասուն և ու-
թը հազար ինը հարիւր ութսուն թիւը ի՞նչպէս կը գրուի.
— Թուանշաններով գրուած թիւ կարդալու համար ի՞նչ կա-
նոն ունինք. — Կարդացէ՛ք 780,556. 8,700,567,504. 2,480,-
001,695,815. 70,456,007 թիւերը. — Թուագիտութեան մէջ
գործածուած նշանները որո՞նք են. — Ինչո՞ւ համար կը գոր-
ծածուին. — Բազմապատկութեան նշանն ո՞րն է. — Ի՞նչ
կ'ըսուի + այս նշանը. — Հապա ա՛յս — նշանը. — Քանի՞
հատ նշան ունինք 21ը 7ով բաժնելը ցուցնելու. — Հաւա-
սար ըստած նշանը ո՞րն է. — Ի՞նչ ըսել է $17 > 4$:



ԴԱՍ Ե.

ԱՄԲՈՂԶ ԹՈՒՌՅ ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅԱԻԵԼՈՒՄ Ն

22. Յաւելումը թուադիտական գործողութիւններուն առաջինն է, որ շատ մը նոյնասեռ թիւեր մէկտեղ բերելով մէկ թիւ կադմել կը սորվեցնէ: Աս գործողութենէն դանուածը հոսմար կ'ըսուի:

23. ԿԱՆՈՆ. Ամբողջ թիւերը գումարելու համար պէտք է.

1. Գումարելի թիւերը կարգաւ իրարու տակ անանկ կերպով գրել՝ որ համակարգ միութիւնները մի և նոյն սիւնակի մէջ իյնան, այսինքն միաւորները միաւորներուն տակ, տասնաւորները տասնաւորներուն տակ, և այլն գրուած ըլլան.

2. Նոյն թիւերը ստորագծելով աջ կողմէն սկսել միաւորները գումարել.

3. Գտնուած գումարը երբ 9էն աւելի չըլլայ, միաւորներուն տակը գրել.

4. Երբ 9էն աւելի ըլլայ՝ որ ըսել է տասնաւոր և միաւոր պարունակէ, ան ատեն միաւորը միաւորներուն տակը գրել, և տասնաւորները տասնաւորներուն հետ գումարել.

5. Նմանապէս տասնաւորները, հարիւրաւորներն և այլն գումարել.

6. Եթէ այս ինչ կարգի միութեանց գումարը տասնաւոր միութիւն ըլլայ, այսինքն 10. 20. 30. 40 և այլն, ան ատեն նոյն սիւնակին տակը 0 մը դնել և տասնաւորները յաջորդ սիւնակին տակը գումարել.

7. Այսպէս շարունակել մինչեւ որ միութեանց վերջին կարգը հասնինք, որուն գումարն ալ իր ձեւովը նոյն վերջին սիւնակին տակը գրել:

Օրինակ. Գումարել 377. 9,649. 768 և 1,307 թիւերը:

Գործողութիւն:


377

9,649

768

1,307

12,304 գումար:



Արդ այս թիւերը վերի կանոնին համեմատ շարելով, աջ կողմէն սկսեցի ըսելով. 7ը 8ալ 13. 9ալ 24. 7ալ 51. 4 միաւորը գրեցի և 5 տասնաւորը տասնաւորներուն հետ գումարեցի ըսելով. 5՝ 6ալ 9. 4ալ 15. 7ալ 20: Զրօն գրեցի և 2ը հարիւրաւորաց հետ գումարեցի ըսելով. 2՝ 5ալ 7. 7ալ 14. 6ալ 20. 5ալ 25: 5ը գրեցի և 2ը յաջորդ սիւնակին վրայ տակըրնելով եղաւ 12. զոր իր ձեւովը գրեցի, որով բովանդակ գումարն եղաւ 12,304:

24. Գումարել հետեւեալ թիւերը :

$$5+6+8+27+4$$

$$68+71+80+9$$

$$564+84+704+3,605$$

$$45+460+2,000+7+5,006$$

$$2,345+60,870+444,004$$

$$976+75,843+99,889$$

$$888+7,777+6,666+99,999$$

$$50+600+7,000+80,000+90,000$$

$$2,070+9,876+5,436+12,304+7,887$$

25. Փոք. Գործողութեան մը փորձն ըսելով կը հասկընանք ուրիշ գործողութիւն մը, որ ի գործ դրուելով նոյն առաջին գործողութեան ճիշդ կամ սխալ ըլլալը կ'իմացընէ հաւանական կերպով :

Յաւելման փորձ ընելու համար պէտք է .

երկրորդ անգամ բայց հակառակ կերպով գումարել. այսինքն՝ եթէ առաջ վարէն դէպ ի վեր գումարած ենք նէ, երկրորդ անգամ վերէն դէպ ի վար գումարել. ասանկով թիւերը երկու կերպով գումարուելով, առջի գործողութեան մէջ եղած սխալը հաւանական է որ երկրորդ գործողութեան մէջ ուղղուի :

Գործ .	Փորձ .
1,203	1,203
5,069	5,069
4,715	4,715
547	547
14,506	14,506

ԴԱՍ Զ.

26. ՅԱԻԵԼՄԱՆ ՎՐԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Դպրոց մը երեք դաս կը բաժնուի , պղտիկ դասը 39 աշակերտէ կը բաղկանայ , միջին դասը 53 , մեծ դասը 45 . քանի՞ աշակերտ կայ դպրոցին մէջ :

Պատ. 137 աշակերտ :

Բ. Աշխարհս հինգ մասերու կը բաժնուի , որ են՝ Եւրոպա , Ասիա , Ափրիկէ , Ամերիկա , և Ովկիանիա . Եւրոպան 300,000,000 բնակիչ ունի . Ասիան 300,000,000 . Ափրիկէն 100,000,000 . Ամերիկան 70,000,000 . և Ովկիանիան 30,000,000 . ի՞նչքան է աշխարհիս բոլոր բնակիչը :

Պատ. 1,000,000,000 բնակիչ :

Գ. Պարտէզի մը մէջ կան 375 խնձորենի , 289 տանձենի , 387 կեռասենի , 425 դեղձի և 126 ծիրանի . քանի՞ ծառ կայ պարտէզին մէջ :

Պատ. 1,602 ծառ :

Դ. Յունուար ամիսը 31 օր է. փետրուարը 28 կամ 29 . Մարտը 31 . Ապրիլը 30 . Մայիսը 31 . Յունիսը 30 . Յուլիսը 31 . Օգոստոսը 31 . Սեպտեմբերը 30 . Հոկտեմբերը 31 . Նոյեմբերը 30 . Դեկտեմբերը 31 : Բոլոր տարին քանի՞ օր է :

Պատ. 365 կամ 366 օր :

Ե. Գործաւոր մը 12 օրուան մէջ 48 արշն տեղ բանեցաւ և շահեցաւ 240 դրշ : Յետոյ 8 օրուան մէջ 32 արշն բանելով շահեցաւ 160 դրշ : Դարձեալ 6 օրուան մէջ 25 արշն բանելով շահեցաւ 124 դրշ : Կ'ուզենք խմանալ թէ քանի՞ օր աշխատեցաւ , ո՞րչափ արշն տեղ բանեցաւ , և ո՞րչափ շահեցաւ :

Պատ. Աշխատեցաւ 26 օր . բանեցաւ 105 արշն . շահեցաւ 524 դրշ :

Զ. Մարդ մը 1839ին ծներ է , ո՞ր թուականին 58 տարու կ'ըլլայ :

Պատ. 1897ին :

Է. 34 արշն չուխայ Ստեփանէն առինք , 27 ալ վարդանէն , 39 ալ Յովհաննէսէն . բոլորը քանի՞ արշն եղաւ :

Պատ. 100 արշն :

Ը. 2,786 դրշ վահանէն առնելիք ունինք , 7,569 դրշ ալ Տիգրանէն . 89,607 դրշ թաղէ :

ուսէն, 107,906 զրշ Բարթուղիմէոսէն . բաւորը քանի՞ զրշ առնելիք ունինք :

Պատ. 207,868 զրշ :

Թ. Ազգային Սահմանադրութեան համեմատ Ազգային Ընդհանուր Ժողովը կը բաղկանայ երեսփոխաններէ, որոնցմէ 160ը Պօլսոյ թաղերուն Եկեղեցեաց կողմէն ընտրեալ, և 60ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ, և այս ազգային երեսփոխանաց անդամակից անձանց թիւն ալ 180 կրնայ ըլլալ . արդ՝ Ընդհանուր Ժողովը քանի՞ անդամէ բաղկացած կ'ըլլայ :

Պատ. 400 :

Ժ. Ընտանիքի մը մէջ 4 տղայ կան . խիստ պզտիկը 7 տարեկան . երկրորդն անկէց 3 տարու մեծ, երրորդն երկրորդէն 3 տարու մեծ, չորրորդն երրորդէն 2 տարու մեծ . իսկ հօրերնուն տարիքը չորս տղայոց տարիքին գումարին հաւասար է, և մօրերնունն ալ վերջի երեք տղայոց տարիքին գումարին հաւասար . արդ՝ ի՞նչ է հօրն ու մօրն և տղայոց ամեն մէկուն տարիքը :

Պատ. խիստ պզտիկը 7 տարու . երկրորդը 10 . երրորդը 13 . չորրորդը 15 . Մայրը 38 . Հայրը 45 :

ԴԱՍ Է.

ԲԱՐՁՈՒՄՆ

27. Բարձումը գործողութիւն մ'է որով կ'իմանանք երկու թիւերու իրարմէ ունեցած տարբերութիւնը : Ինչպէս 8 ին 6 էն ունեցած տարբերութիւնը գտնալու համար 6ը 8էն կը հանենք կը մնայ 2 :

28. Այն թիւը ուսկից ուրիշ թիւ մը պիտի հանենք՝ կ'ըսուի նուազելի թիւ կամ ԴՅ թիւ . և այն թիւը զոր պիտի հանենք՝ հանելի թիւ կամ ԺԴ թիւ . իսկ աւելցածը՝ Ժաւորդ կամ Կարբերութիւն . Ինչպէս վերի օրինակին մէջ 8ը նուազելի է , 6ը հանելի , իսկ 2ը մնացորդ կամ տարբերութիւն :

29. ԿԱՆՈՆ Ա. փոքր թիւ մը մեծ թիւէ մը հանելու համար պէտք է .

1. ֓փոքր թիւը մեծ թիւին տակը գրել , անանկ որ համակարգ միութիւնները միեւնոյն սիւնակին մէջ ըլլան .

2. Այն թիւերը ստորագծելով աջ կողմէն սկսիլ միաւորը միաւորէն հանել , մնացածը միաւորին տակը գրել . նոյնպէս ալ տասնաւորը տասնաւորէն , հարիւրաւորը հարիւրաւորէն , և այլն .

3. Եթէ այս ինչ թուանշանն իր վրայի

Թուանշանին հաւասար ըլլայ՝ մնացորդին մէջ զրօ մը դնել :

1. Եթէ փոքր թուոյն այս ինչ թուանըշանը զրօ ըլլայ՝ պէտք է իր վրայի թուանըշանը վար առնել :

Օրինակ. հանել 30,457ը 98,467էն :

Գործողութիւն :

$$\begin{array}{r} 98,467 \quad \text{մեծ թիւ} \\ 30,457 \quad \text{փոքր թիւ} \\ \hline 68,010 \quad \text{մնացորդ} \end{array}$$

30. ԿԱՆՈՆ Բ. Բայց երբ պատահի որ փոքր թուոյն այս ինչ թուանշանն իր վրայի թուանշանէն մեծ ըլլայ, պէտք է .

1. վրայի թուանշանին վրայ տասը միութիւն աւելցնել և այնպէս հանել .

2. ցետոյ անմիջապէս հանելի թուանըշանին վրայ միութիւն մ'ալ աւելցնել, և գործողութիւնը շարունակել :

Օրինակ. 3,025էն 2,786 հանել :

Գործողութիւն :

$$\begin{array}{r} 3,025 \\ 2,786 \\ \hline 0,239 \end{array}$$

Պիտի ըսենք 6ը 5էն չեն ելնելով (5ին վրայ միութիւն մ'աւելցնենք), կը մնայ 9. ձեռքերնիս կայ 1՝ ճալ կ'ընէ 9, որ 12էն ելնելով կը մնայ 5. ձեռքերնիս կայ 1՝ ճալ :

կ'ընէ 8, որ 10էն ելնելով կը մնայ 2. ձեռքերնիս կտր 1' 2ալ
կ'ընէ 5. 5ը 5էն ելնէ բան չի մնար:

31. Հանել հետեւեալ թիւերը :

864—532

53,678—13,204

868,856—72,345

3,458—2,163

7,834—3,267

12,345—6,789

987,654—3,210

35,487—26,784

54,605—7,856

70,456—6,000

60,880—49,769

80,000—6,767

692,257—298,296

710,012—620,703

8,080,808—4,494,949

833,333—533,232

987,654,321—123,456,789

32. Բարձման փորձը երկու կերպով կըր-
նայ ըլլալ .

1. Երբ մնացորդը փոքր թիւին վրայ գու-
մարենք, մեծ թիւը պիտի ելնէ .

2. Երբ մնացորդը մեծ թիւէն հանենք՝
փոքր թիւը պիտի մնայ :

$$= 25 =$$

Օրինակ Ա.

Գործ.	Փորձ.
107 մեծ թիւ	99 փոքր թիւ
99 փոքր թիւ	8 մնացորդ
8 մնացորդ	107 մեծ թիւ

Օրինակ Բ.

Գործ.	Փորձ.
107 մեծ թիւ	107 մեծ թիւ
99 փոքր թիւ	8 մնացորդ
8 մնացորդ	99 փոքր թիւ

33. Հետեւեալ գործողութիւնները կատարել.

$$12+25-4+3-14-12$$

$$12-15+20-5+6$$

$$1-10-30+28+5+6$$

$$20+30-60+18-5$$

$$5-35+4+67-4-38$$

$$36-7-28-40+54$$

$$10+4+27-30+5-7-20$$

$$8-8+7-4-3+468-78$$

$$60+30-75-5-4-5$$

$$7-4-5-30+425$$



ԴԱՍ Ը.

34. ԲԱՐՁՄԱՆ ՎՐԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. 3,768 ՂՐԶ պարտքիս 1,869ը վճարելու
ըլլամ, քանի՞ ՂՐԶ պարտքս կը մնայ :

Պատ. 1,899 ՂՐԶ :

Բ. Մեծն Նաբօլէօն ծնաւ 1769ին և մե-
ռաւ 1824ին, քանի՞ տարի ապրեցաւ :

Պատ. 52 տարի :

Գ. 36,550 մարդէ բաղկացեալ բանակ մը՝
պատերազմի դաշտին մէջ կորսնցուց 12,475
մարդ . ո՞րքան մարդ մնաց :

Պատ. 24,075 մարդ :

Դ. Մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձե-
ռօք Ազգերնուս լուսաւորութիւնը ֆրիստոսի
303 թուականին եղաւ, մինչեւ հիմա (1866)
քանի՞ տարի կ'ընէ :

Պատ. 1563 տարի :

Ե. Մէկը 1,820 ՂՐԶի բան գնեց, և ծա-
խեց 1,946 ՂՐԶի . ո՞րչափ ՂՐԶ շահեցաւ :

Պատ. 96 ՂՐԶ :

Զ. Տպագրութեան գտնուիլը 426 տարի է
մինչեւ հիմա . Հայոց մէջ տպագրութեան
սկզբնաւորութիւնը 299 տարի, ուրեմն ո՞րչափ
տարի վերջը Հայերը տպագրութեան սկսան :

Պատ. 127 :

Է. Մեր Հայոց Ազգին թագաւորութեան վերնալը 1373 թուականին եղած է , մինչեւ հիմա ո՞րչափ տարի եղած կ'ըլլայ :

Պատ. 493 տարի :

Ը. Պաղեստինու մէջ թափօր լեռը 1,740 ոտք բարձր է , Հայաստանու մէջ Մասիս լեռն ալ 16,254 ոտք բարձր է . Մասիսը թափօրէն ո՞րքան ոտք բարձր է :

Պատ. 14,514 ոտք :

Թ. Մեր լեզուին գրերը Սուրբ Մեսրոպայ ձեռօք գտնուիլը 1432 տարի է մինչեւ հիմա , ո՞ր թուականին գտնուեցաւ :

Պատ. 434 ին :

Ժ. Հայր մը 36 տարուան էր իր որդւոյն ծննդեան ատեն . քանի՞ տարու կրնայ ըլլալ որդին՝ հօրը 58 տարեկան ըլլալու ատենը :

Պատ. 22 տարեկան :

ԴԱՍ Թ.

35. ՅԱԻԵԼՄԱՆ ԵՒ ԲԱՐՁՄԱՆ ՎՐԱՅ

ԽԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. 1,285 թիւին վրայ ո՞ր թիւը գումարուինէ , 3,110 թիւին հաւասար կ'ըլլայ :

Պատ. 1,825 թիւը :

Բ. Մարդ մը 379 զրշ պարտական էր . Ա. անգամ 47 զրշ վճարեց . Բ. անգամ 28 զրշ .

Գ. անդամ 84 . վերջին անգամ 143 զրշ . տա-
կաւին ո՞րքան պարտքը մնաց :

Պատ. 77 զրշ :

Գ. 3,854էն ի՞նչ հանելու է որ 2,560 մնայ .

Պատ. 1,294 թիւը :

Դ. Մարդ մը սնտուկին մէջ 200 զրշ ու-
նէր , 120ը պարտքի տուաւ , և ետքը 75 զրշ
վաստկեցաւ , հիմա քանի՞ զրշ ունի :

Պատ. 155 զրշ :

Ե. Զորս հողւոյ վիճակեցաւ 15,800 զրշ .
առջինն առաւ 5,650 . երկրորդը 3,400 . եր-
րորդը 1,800 . ի՞նչ մնաց չորրորդին :

Պատ. 4,950 զրշ :

Զ. 1,894ը ո՞ր թիւէն հանելու է որ մնա-
ցածը 1,786ի հաւասար ըլլայ :

Պատ. 3,680 թիւէն :

Է. վաճառական մը նաւ մ'առաւ 11,240 լի-
րայի . 305 լիրա տուաւ նորոգելու համար , և ետ-
քը 75 լիրա շահով ծախեց . քանի՞ ծախեց :

Պատ. 11,620 լիրայի :

Ը. 1835ին տեսնուած դիսաւորը 75 տարի
անտեսանելի մնացած էր . ուրեմն ե՞րբ մէյմ'ալ
անկէց առաջ երեւցած էր , և մէյմ'ալ ե՞րբ
պիտի տեսնուի :

Պատ. երեւցած էր 1759ին . և պիտի ե-
րեւի 1911ին :

Թ. Գլանքլին մեռաւ 1790ին 84 տարեկան . երբ ծնած էր :

Պատ. 1706ին :

Ժ. Չորս որդիք 30,000 Ֆրանքի ժառանգութիւն մը բաժնեցին մէջերնին այսպէս. անդրանիկն առաւ 12,500 Ֆրանք . երկրորդն առջինէն 8,683 Ֆրանք պակաս . երրորդն երկրորդէն 1,475 աւելի, և չորրորդն առաւ երեքէն մնացածը . ո՞րչափ ինկաւ վերջի երեքին :

Պատ. երրորդն առաւ 3,813 Ֆրանք . երրորդը 5,290 Ֆրանք . չորրորդը 8,393 Ֆրանք :

ԴԱՍ Ժ.

ԲԱՉԴՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ

36. Բազմապատկութիւնը գործողութիւն մ'է , որ կը սորվեցնէ թիւ մը այնչափ անգամ շատցնել որչափ որ միութիւն կայ ուրիշ թուոյ մը մէջ : Ինչպէս Յը 4ով բազմապատկել ըսելը , Յը այնչափ անգամ շատցնել ըսել է , որչափ որ միութիւն կայ 4ին մէջ , այսինքն 4 անգամ .

$$\begin{array}{r} 3 \\ 3 \\ 3 \\ 3 \\ 3 \\ \hline 12 \end{array}$$

Օրինակին մէջ յայտնի կ'երեւայ որ Յը 4 անգամ իրարու տակ գրուած և գումարուած

է. ուրեմն բազմապատկութիւնը պարզ յաւելմամբ ալ կրնայ կատարուիլ. ուսկից կը հետեւի թէ բազմապատկութիւնն է հասանալէ աւելցանքն : Բայց եթէ թիւերը քիչ մը մեծ ըլլան, ան ատեն գործողութիւնը յաւելմամբ կատարելը խիստ դժուար ըլլալով՝ բազմապատկութեամբ կը կատարուի :

37. Այն թիւը՝ որ կը բազմապատկուի կ'ըսուի Բազմապատկելի. այն թիւն որով կը բազմապատկուի՝ Բազմապատկող, (ասոնք երկուքը միատեղ արտադրելէ կ'ըսուին). և գործողութենէն ելածն ալ՝ արտադրեալ :

38. Բազմապատկութեան մէջ չորս պատահում կայ .

Ա. Միաթուանշան թիւ մը միաթուանշանով բազմապատկել :

Բ. Բազմաթուանշան թիւ մը միաթուանշանով բազմապատկել :

Գ. Որ և իցէ թիւ մը մէկ կամ աւելի զրո ունեցող միութեամբ բազմապատկել :

Դ. Բազմաթուանշան թիւ մը բազմաթուանշանով բազմապատկել :

39. ԿԱՆՈՆ Ա. Միաթուանշան թիւերն իրարու հետ բազմապատկելու համար պէտք է.

Քաջ ուսանիլ բազմապատկութեան աղիւսակը :

2	անդամ	4	կ'ընէ	2
2	»	2	»	4
2	»	5	»	6
2	»	4	»	8
2	»	5	»	10
2	»	6	»	12
2	»	7	»	14
2	»	8	»	16
2	»	9	»	18

5	անդամ	4	կ'ընէ	5
5	»	2	»	6
5	»	5	»	9
5	»	4	»	12
5	»	5	»	15
5	»	6	»	18
5	»	7	»	21
5	»	8	»	24
5	»	9	»	27

4	»	4	»	4
4	»	2	»	8
4	»	5	»	12
4	»	4	»	16
4	»	5	»	20
4	»	6	»	24
4	»	7	»	28
4	»	8	»	32
4	»	9	»	36

5	»	4	»	5
5	»	2	»	10
5	»	5	»	15
5	»	4	»	20
5	»	5	»	25
5	»	6	»	30
5	»	7	»	35
5	»	8	»	40
5	»	9	»	45

6	»	4	»	6
6	»	2	»	12
6	»	5	»	18
6	»	4	»	24
6	»	5	»	30
6	»	6	»	36
6	»	7	»	42
6	»	8	»	48
6	»	9	»	54

7	»	4	»	7
7	»	2	»	14
7	»	5	»	21
7	»	4	»	28
7	»	5	»	35
7	»	6	»	42
7	»	7	»	49
7	»	8	»	56
7	»	9	»	63

8	»	4	»	8
8	»	2	»	16
8	»	5	»	24
8	»	4	»	32
8	»	5	»	40
8	»	6	»	48
8	»	7	»	56
8	»	8	»	64
8	»	9	»	72

9	»	4	»	9
9	»	2	»	18
9	»	5	»	27
9	»	4	»	36
9	»	5	»	45
9	»	6	»	54
9	»	7	»	63
9	»	8	»	72
9	»	9	»	81

Օրինակներ .

5 անգամ 7 , կ'ընէ 35

8 " 6 , " 48

և այլն , և այլն , և այլն .

40. ԿԱՆՈՆ Բ. Բազմաթուանշան թիւ մը միաթուանշանով բազմապատկելու համար պէտք է .

1. Բազմապատկողը , բազմապատկելիին միաւորին տակը գրել և ստորագծել .

2. Բազմապատկել յաջորդաբար բազմապատկողով բազմապատկելիին միաւորները , տասնաւորները , հարիւրաւորները , և այլն .

3. Երած մասնական արտադրեալներուն միայն միաւորները գրել և տասնաւորները միտք պահել ու յաջորդ արտադրեալին վրայ գումարել .

4. Վերջին արտադրեալն ալ իր ձեւովը գրել :

Օրինակ . Բազմապատկել 789ը 8ով :

Գործողութիւնն :

789

8

6,342

8 անգամ 9 կ'ընէ 72, 2 միաւորը գրեցի և 7 տասնաւորը միտքս պահեցի. 8 անգամ 8 կ'ընէ 64, 7 տասնաւոր ալ կար՝ եղաւ 71. 1 տասնաւորը գրեցի և 7 հարիւրաւորը միտքս

պահեցի. 8 անգամ 7 կ'ընէ 56, 7ալ կար' եղաւ 65 հարիւ-
րաւոր որ իր ձեւովը գրեցի, որով արտադրեալն եղաւ 6,542:

Բազմապատկել հետեւեալ թիւերը :

12×5	50,675×7
25×7	423,456,789×9
167×8	360,365×3

41. ԿԱՆՈՆ Գ. Որ և իցէ թիւ մը մէկ կամ
աւելի զրօ ունեցող միութեամբ այսինքն 10 .
100 . 1,000 և այլն թիւերով բազմապատկելու
համար պէտք է .

Բազմապատկողին զրօները բազմապատ-
կելիին աջ կողմը շարել :

Օրինակ :

12ը	10ով բազմապատկենք	կ'ըլլայ	120
496ը	100ով	"	" 49,600
56ը	1000ով	"	" 56,000

42. ԿԱՆՈՆ Գ. Բազմաթուանշան թիւ մը
բազմաթուանշանով բազմապատկելու համար
պէտք է .

1. Բազմապատկողը բազմապատկելիին
տակը գրել և ստորագծել .

2. Բազմապատկողին ամեն մէկ թուանը-
շանովը բազմապատկելիին բոլոր թուանշան-
ները միաւորէն սկսելով բազմապատկել .

3. Ելած մասնական արտադրեալներն ա-
նանկ կերպով իրարու տակ գրել որ ամեն

«էկուն աջ կողմի առաջին թուանշանը՝ նոյն արտադրեալը կազմող բազմապատկող թուանշանին տակը գտայ :

▲. Մասնական արտադրեալները գումարել, որով գումարը բովանդակ արտադրեալը կ'ըլլայ :

Օրինակ. Բազմապատկել 749ը 598ով :

Գործողութիւն :

749

598

5992 Ա. մասնական արտադրեալ :

6741 Բ. " "

3745 Գ. " "

447902

Նախ՝ բազմապատկողին 8 միաւորով բազմապատկելին բոլոր թուանշանները բազմապատկեցի, և Ա. մասնական արտադրեալը գտայ 5,992: Երկրորդ բազմապատկողին 9 թուանշանով բազմապատկեցի բազմապատկելին բոլոր թուանշանները, և գտայ Բ. մասնական արտադրեալ 6,741, զոր գրեցի բազմապատկողին 9 թուանշանին ուղղութեամբը. նոյնպէս բազմապատկողին հարիւրաւոր թուանշանովն ալ բազմապատկեցի և գտայ Գ. մասնական արտադրեալ 3,745, զոր 5 հարիւրաւորին ուղղութեամբը գրեցի. վերջապէս այս երեք մասնական արտադրեալները գումարելով գտայ 447,902. որ է բովանդակ արտադրեալ :

43. Գիտելի՛ք Ա. երբ բազմապատկողին միջին կարգերէն մէկը կամ աւելին պակսի, պէտք է :

$$= 35 =$$

Ձանոնք զանց ընելով ձախ կողմի յաջորդ-
թուանշանով բազմապատկել :

$$\begin{array}{r} 0\text{ր}\text{ն}\text{ա}\text{կ} : \\ 12318 \\ 7004 \\ \hline 49272 \\ 86226 \\ \hline 86275272 \end{array}$$

44. Գիշերէ՛ք, Բ. երբ արտադրիչներուն մէ-
կուն կամ երկուքին ալ աջ կողմը զրօներ
դանուին, պէտք է .

Դիւրութեան համար գործողութեան ա-
տեն զրօները զանց ընել, ու յետոյ արտադ-
րեալին աջ կողմը շարել :

$$\begin{array}{r} 0\text{ր}\text{ն}\text{ա}\text{կ}\text{ն}\text{եր} : \\ \begin{array}{r} 85000 \\ 4 \\ \hline 340000 \end{array} \quad \begin{array}{r} 5763 \\ 3600 \\ \hline 34578 \\ 17289 \\ \hline 20746800 \end{array} \quad \begin{array}{r} 58600 \\ 260 \\ \hline 3516 \\ 1172 \\ \hline 15236000 \end{array} \end{array}$$

45. Բազմապատկել հետեւեալ թիւերը :

$$\begin{array}{l} 8,965 \times 5 \\ 380,456 \times 9 \\ 6,405,087 \times 7 \\ 58,990 \times 800 \\ 67,045 \times 110 \end{array}$$

$$359,807 \times 10,000$$

$$7,876 \times 32$$

$$4,000 \times 5,000$$

$$8,484 \times 76$$

$$98,987 \times 78$$

$$49 \times 100$$

$$359,046 \times 267$$

$$46,735 \times 674$$

$$6,704,700 \times 65,000$$

$$100 \times 10,000$$

$$53,497 \times 6,074$$

$$87,060,800 \times 45,007$$

$$7,876,543 \times 34,077$$

$$807,070,569 \times 8,794,998$$

$$123,456,789 \times 123,456,789$$

46. Բազմապատկութեան հետեւեալ փորձն ընելու համար պէտք է .

Արտադրիչներուն կարգը փոխել և դարձեալ գործողութիւնն ընել, եթէ առջի արտադրեալն ելնէ՝ ուղիղ է :

Օրինակ :

Գործ.		Փորձ.
64		38
38		64
512		152
192		228
2432		2432

47. Հետևեալ գործողութիւնները կատարել :

$$67+6-9 \times 7$$

$$36-27+35 \times 8$$

$$76+20-5+64 \times 58$$

$$5+47-4 \times 8+25-12$$

$$94 \times 15 \times 7+8-5 \times 726$$

$$64-7-8-9+36 \times 25+7+27-4$$

$$10 \times 5+67+708 \times 5,046-367$$

$$6,070 \times 408 \times 64-754-638+45 \times 1,000$$

$$12 \times 5+10-40-3 \times 10$$

48. ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Դասարանի մը մէջ 17 նստարան կայ , որոնց իւրաքանչիւրին վրայ 12 աշակերտ կը նստի . դասարանին մէջ քանի՞ աշակերտ կայ :

Պատ. 204 աշակերտ :

Բ. Պարտիզպան մը իր ծառերը 72 կարգի վրայ տնկեց , ամեն մէկուն մէջ 150 տկան ծառ . բոլորը քանի՞ ծառ ունէր :

Պատ. 10,800 ծառ :

Գ. Գործաւոր մը օրը 13 ղրշ կը շահի . 34 գործաւոր շարունակ բոլոր շաբաթը՝ բաց ի կիրակիէն՝ աշխատելով ո՞րքան պիտի շահին :

Պատ. 2,652 ղրշ :

Դ. 7,896 ղրուշը քանի՞ փարա կ'արժէ :

Պատ. 315,840 փարա :

Ե. 7,607 օգգան քանի՞ տրամ է :

Պատ. 3,042,800 տրամ :

Զ. Սեղանաւոր մը 9 ծառայ ունի , որոնց ամեն մէկուն 1,800 աւան դրշ կու տայ տարին . տարեգլուխ ամենուն քանի՞ դրշ տուած կ'ըլլայ :

Պատ. 16,200 դրշ :

Է. Զաղացքի մ' անիւը մէկ վայրկենի մէջ 25 անգամ կը դառնայ . 35 վայրկենի մէջ ո՞ր քան պիտի դառնայ :

Պատ. 875 անգամ :

Ը. 3,769 թիւը կ'ուզեմ գումարել 458 անգամ իր վրայ , ի՞նչ պիտի ըլլայ գումարը :

Պատ. 1,726,202 :

Թ. Օգգա մը շաքարը 8 դրշի վրայօք՝ տաւառ մը շաքար առնուեր է , որուն ծանրութիւնն է 267 օգգա , միայն տակառին ծանրութիւնն է 37 օգգա . հիմա բոլոր շաքարին քանի՞ դրշ վճարելու է , 58 դրշ եղած ծախքն ալ մէկտեղ հաշուելով :

Պատ. 1,898 դրշ :

Ժ. Հինգ թօփ չուխայ ծախու առնուեր է , ամեն մէկը 60 աւան արշըն և ամեն մէկ արշընը 58 աւան դրշ . կ'ուզենք իմանալ բոլորին տրուած դրշը :

Պատ. 17,400 դրշ :

ԴԱՍ ԺԱ.

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ն

49. Բաժանումը գործողութիւն մ'է որ կը արվեցնէ թէ այս ինչ թիւ մը քանի անգամ կը պարունակուի ուրիշ թուոյ մը մէջ: Ինչպէս, եթէ ըսեմ 6 թիւը 30ին մէջ քանի անգամ կայ, յայտնի է որ 5 անգամ, ինչու որ 6ը 30էն 5 անգամ կրնանք հանել, այսպէս .

$$\begin{array}{r} 30 \\ 6 \\ \hline 24 \\ 6 \\ \hline 18 \\ 6 \\ \hline 12 \\ 6 \\ \hline 6 \\ 6 \\ \hline 0 \end{array}$$

Այդէ կ'իմանանք ստուգիւ թէ 6ը 30ին մէջ 5 անգամ կայ: Բայց երբ բաժանելին մեծ ըլլայ, շատ դժուար և երկայն կ'ըլլայ գործողութիւնը բարձրամը կատարելը, և ասոր համար հնարուած է բաժանումը՝ որ է համարաբանական բաժանում:

30. Այն թիւը՝ որ պիտի բաժնուի, կ'ըսուի Բաժանելի. այն թիւը՝ որով պիտի բաժնուի՝ կ'ըսուի Բաժանարար. և գործողութենէն ելածին կ'ըսուի Դանորդ:

31. Բաժանումը կրնանք սահմանել նաեւ այսպէս. Բաժանումը գործողութիւն մ'է, որ երկու արտադրիչներով կազմուած արտադրեալը, և այն երկու արտադրիչներէն մէկը ժանուցեալ ըլլալով՝ միւս արտադրիչը դաժնել կը սորվեցնէ: Ինչպէս 63 զըշը 9 մարդու հաւասարապէս բաժնենք՝ ամեն մէկուն քանի կա՞ն զըշ պիտի իյնայ. այսպէս պիտի լուծենք, եթէ ամեն մէկուն առածը գիտնալինք, յայտնի է որ այն առածնին 9 անգամ շատցընէինք 63 պիտի ելնէր. ուրեմն ո՞րն է այն թիւը որ եթէ 9ով բազմապատկուի 63 կ'ելնէ. ասոր պատասխան՝ բազմապատկութեան աղիւսակէն շուտով կրնանք ըսել թէ այն թիւը 7 է:

32. Բաժանման մէջ չորս պատահում կայ.

Ա. Երկաթուանշան թիւ մը միաթուանշանով բաժնել:

Բ. Բազմաթուանշան թիւ մը միաթուանշանով բաժնել:

Գ. Որ և իցէ թիւ մը՝ մէկ կամ աւելի զրօունեցող միութեամբ բաժնել:

Դ. Բաղմաթուանչան թիւ մը բաղմաթուանչանով բաժնել :

Յ3. ԿԱՆՈՆ Ա. Երկաթուանչան թիւ մը միաթուանչանով բաժնելու համար պէտք է .

1. Բաղմապատկութեան աղիւսակին մէջ բաժանարարը պարունակող խորանը գտնել .

2. Աջ կողմի թիւերուն մէջ ալ բաժանելին՝ կամ բաժանելիին մօտաւոր թիւը .

3. Գտնուած երկու թիւերուն մէջ տեղի թիւը քանորդը կ'ըլլայ :

Օրինակ. Ա. 20ին մէջ քանի՞ 3 կայ :

Տ բաժանարարը չորրորդ խորանին մէջ փնտռելով աջ կողմն ալ գտայ 20ը. ասոնց մէջ տեղը կայ 4 թիւը. ուրեմն 4 անգամ 3 կայ եղեր :

Օրինակ. Բ. Քանի՞ անգամ 8ը 36 կ'ընէ :

8ը եօթներորդ խորանին մէջ նայելով աջ կողմը գտայ 36ը. ասոնց մէջ տեղը կայ 7. ուրեմն 7 անգամ 8ը 36 կ'ընէ :

Օրինակ. Գ. 60ին մէջ քանի՞ 9 կայ :

9 աղիւսակին մէջ փնտռելով, տեսայ որ աջ կողմը 60 չկայ՝ այլ 60ին մօտաւորն՝ որ է 54. և ասոնց մէջ տեղը 6 թիւը. ուրեմն 60ին մէջ 6 հատ 9 կայ և կ'աւելնայ 6 :

Յ4. Պատասխանել հետեւեալ հարցմանց :

40ին մէջ քանի՞ անգամ 8 կայ : — 36ին մէջ քանի՞ 7 կայ : — 72ին մէջ քանի՞ 9 կայ : — 63ին մէջ քանի՞ 8 կայ : — 54ին մէջ քանի՞ 6 կայ : — Քանի՞ անգամ 7ը 33 կ'ընէ : — Քանի՞ անգամ 6ը 40 կ'ընէ : — Քանի՞ անգամ 4ը 20 կ'ընէ : — Քանի՞ անգամ 7ը 38 կ'ընէ : — 4 անգամ 9 ի՞նչ կ'ընէ : — 36ին մէջ քանի՞ 4 կայ : — 36ին մէջ քանի՞ 9 կայ : — Քանի՞ անգամ 9ը 36 կ'ընէ :

55. ԿԱՆՈՆ Բ. Բազմաթուանշան թիւ մը միաթուանշանով բաժանելու համար պէտք է .

1. Բաժանելին գրել և անոր աջ կողմը բաժանարարը .

2. Երկուքին մէջ տեղը կեդրոնահայեաց գիծ մը քաշել և բաժանարարը ստորագծել .

3. Փնտռել թէ բաժանարարը քանի անգամ կայ բաժանելիին ձախ կողմի մէկ կամ երկու թուանշաններուն մէջ, (որոնց կ'ըսուի Ա. մասնական բաժանելի) . և քանորդը գրել բաժանարարին տակ .

4. Քանորդը բաժանարարով բազմապատկել և արտադրեալն Ա. մասնական բաժանելիէն հանել .

5. Մնացորդին աջ կողմը բաժանելիին յաջորդ թուանշանն իջեցընել՝ որով կը կազմուի Բ. մասնական բաժանելի, և բաժանարարով բաժնել .

6. Այս քանորդը գրել առջի քանորդին աջ կողմը և բաժանարարով բազմապատկել .

7. Արտադրեալը հանել Բ. մասնական բաժանելիէն և մնացորդին աջ կողմը իջեցընել բաժանելիին յաջորդ թուանշանը, որով կը կազմուի Գ. մասնական բաժանելի .

8. Այսպէս շարունակել մինչեւ որ բաժանելիին բոլոր թուանշանները վար իջած ըլլան .

= 43 =

Օրինակ. Բաժանել 28,674ը 6ի :

Գործողութիւն:

Բաժանելի :

Ա. մասնական բաժանելի 28674			6 բաժանարար
		24	4779 քանորդ
Բ.	”	”	46
			42
Գ.	”	”	47
			42
Դ.	”	”	54
			54
			0

Բաժանելին և բաժանարարն ըստ կանոնի շարելէն ետքը 6 բաժանարարը փնտռեցի 28 Ա. մասնական բաժանելին մէջ և գտայ 4 քանորդ, զոր իւր տեղը գրեցի. 6ը 4ով բազմապատկեցի և 24 արտադրեալը 28էն հանեցի մնաց 4. այս 4ին աջ կողմը բաժանելին յաջորդ 6 թուանշանն առնելով 46 եղաւ որ է Բ. մասնական բաժանելի, զոր 6ով բաժնեցի և գտայ 7 քանորդ. այս 7ը 4ին աջ կողմը գրեցի և 6ով բազմապատկելով գտայ 42, զոր 46էն հանելով մնաց 4, որուն աջ կողմը յաջորդ 7 թուանշանն առնելով կազմուեցաւ 47, որ է Գ. մասնական բաժանելի. այս 47ը 6ով բաժնելով գտայ 7 քանորդ. զոր առջի 7 քանորդին աջ կողմը գրեցի: Եւ այսպէս շարունակելով գտայ 4779 որ է բովանդակ ճիշդ քանորդ:

1 շիլինէն մինչեւ 19 շիլին:

շիլ	լիւրս	շիլ	լիւրս	շիլ	լիւրս	շիլ	լիւրս	շիլ	լիւրս
1	0,05	5	0,25	9	0,45	13	0,65	17	0,85
2	0,10	6	0,30	10	0,50	14	0,70	18	0,90
3	0,15	7	0,35	11	0,55	15	0,75	19	0,95
4	0,20	8	0,40	12	0,60	16	0,80		

ԱՂԻՍԱԿ Ե.

Արշնի տասնորդական կոտորակի վերածուած թուոց:

1 փարմագէն մինչեւ 25 փարմագ:

փար	արշն	փար	արշն	փար	արշն	փար	արշն
1	0,0416.	7	0,2916.	13	0,5416.	19	0,7916.
2	0,0833.	8	0,3333.	14	0,5833.	20	0,8333.
3	0,1250	9	0,3750	15	0,6250	21	0,8750
4	0,1666.	10	0,4166.	16	0,6666.	22	0,9166.
5	0,2083.	11	0,4583.	17	0,7083.	23	0,9583.
6	0,2500	12	0,5000	18	0,7500		

Կէտ ունեցող թուանշանները կրնան կրկնուիլ:

ՄԷԿ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ա. Օգգան 12 ղրշ 16 փարա ըլլայ՝ 15
օգգան քանի՞ փարա կ'ընէ :

Գործողութիւն:

12,4

15

620

124

186,0

Առաջին աղիւսակին մէջ նայեցայ 16 փարային ղրշի տասնորդականը և գտայ 0,4 ուստի 12,4ը 25ով բազմապատկեցի՝ եղաւ 186 ղրշ:

Պատ. 186 ղրշ կ'ընէ :

Բ. Անգղիոյ լիւրան 133 ղրշ 24 փարայէն
5 լիւրա 15 շիւլինը քանի ղրշ կ'ընէ :

Գործողութիւն:

133,6

5,75

6680

9352

6680

767,200

40

8,000

24 փարային ղրշի տասնորդականն է 0,6 (եւէ" 85) 15 շիւլինին լիւրայի տասնորդականը 0,75. որով խնդրոյն թիւերը

կ'ըլլան 155,6 և 5,75 զորս իրարու հետ բազմապատկելով
գտայ 768 զըշ և 8 փարա:

Պատ. 768 զըշ 8 փարա կ'ընէ:

Գ. 1200 զըշով քանի՞ արշըն չուխա կ'առ-
նուի եթէ արշընը 53 զըշ 32 փարա ըլլայ:

Գործողութիւն:

$$\begin{array}{r|l}
 1200,0 & 538 \\
 \hline
 1076 & 22 \\
 \hline
 1240 & \\
 1076 & \\
 \hline
 164 & \\
 8 & \\
 \hline
 1312 & 538 \\
 1076 & 2 \\
 \hline
 236 & \\
 2 & \\
 \hline
 472 & 538 \\
 \hline
 & 0
 \end{array}$$

52 փարային զըշի տասնորդականն է 0,8 որով կ'ըլլայ
55,8. այս թիւը 1200 զըշին մէջ բաժնելով գտայ 22 արշըն.
մնացորդ 164ը ըուպ ըրինք և դարձեալ 538ի բաժնեցինք՝
գտանք 2 ըուպ. մնացորդ 256ը կիրահ ըրինք՝ եղաւ 472.
որուն մէջ 538 չը կըցաւ պարունակիլ բայց իրեն մօտ ըլլա-
լուն 1 կիրահ կընայ սեպուիլ:

Պատ. 22 արշըն 2 ըուպ և գրեթէ 1 կիրահ:

Դ. Ուղղանկիւն տեղ մ'ունինք որուն եր-

Կայնութիւնն է 3 արշըն 6 փարմագ . լայնքը
1 արշըն 12 փարմագ . այն տեղը քանի՞ քա-
ռակուսի արշըն է :

Գործողութիւն:

$$\begin{array}{r}
 3,25 \\
 1,5 \\
 \hline
 4625 \\
 325 \\
 \hline
 4,875 \\
 24 \\
 \hline
 3500 \\
 1750 \\
 \hline
 21,000
 \end{array}$$

6 փարմագին արշընի տասնորդականն է 0,25. և 12
փարմագինը 0,5. որով 3,25 և 1,5 թիւերը իրարու հետ
բազմապատկեցի՝ գտայ 4 քառակուսի արշըն. 0,875ն ալ
փարմագ ընելով եղաւ 21 փարմագ:

Պատ. 4 քառակուսի արշըն և 21 փարմագ:
Ե. Մէկ քիլօկրամը 2 ֆրանք 5 սանթիմը-
լայ՝ 3 քիլօկրամ 6 կրամը քանի՞ ֆրանք կ'ըլլայ:

Գործողութիւն:

$$\begin{array}{r}
 2,05 \\
 3,006 \\
 \hline
 4230 \\
 615 \\
 \hline
 6,16230
 \end{array}$$

Սանթիմը ֆրանքին հարիւրորդ մասն ըլլալով 2,05 գրեցի. կրամն ալ քիօկրամին հազարորդ մասն ըլլալով 5,006 գրեցի և բազմապատկելով գտայ 6,16250:

Պատ. 6 ֆրանք և գրեթէ 16 սանթիմ:

Գիտելի՜ Ա. Սովորաբար խնդրոց լուծմանը մէջ ամեն անգամ տասնորդական թուանշաններուն բոլորն ալ չառնուիր, այլ պատասխանին համեմատ՝ երբեմն մէկ, երկու և այլն հատ. ինչպէս կը տեսնուի հետեւեալ խնդրոյն մէջ. գիտնալով որ որչափ աւելի առնուի, թէ պէտ գործողութիւնը երկայն կ'ըլլայ, բայց այնչափ ալ պատասխանին կը մօտեցուի:

Ինչպէս 0,67134ին տեղ կրնանք գրել 0,6713 կամ 0,671 և կամ 0,67:

Նոյնպէս 6,121332ին տեղ՝ 6,1213 կամ 6,12 և կամ 6,1:

2. Օգդան 13,56125 ղրշ ըլլայ՝ 2 օգդա 150 տրամ 2 տէնկը քանի՞ ղրշ կ'ընէ:

Գործողութիւն:

$$\begin{array}{r}
 13,56 \\
 2,376 \\
 \hline
 8136 \\
 9492 \\
 4068 \\
 2712 \\
 \hline
 32,21856
 \end{array}$$

45,56125ին աջ կողմի երեք թուանշանները ձգելով միայն 45,56ը առի. 150 տրամին տասնորդականն է 0,575 և 2 տէն. կինը 0,000125, զոր 0,575ին հետ գումարելով եղաւ 0,57625 որուն միայն 0,576ը ռոնելով գործողութիւնը կատարեցի և գտայ 52,21856: Ճիշդ արտադրեալն է 52,2249205425:

Պատ. 32 զրշ և գրեթէ 8 փարա :

Գիտէ՞ք Բ. Բայց երբ ձգուած թուանշանը 5 կամ 5էն մեծ ըլլայ՝ ան ատեն պէտք է

Առնուածներուն աջ կողմի թուանշանին վրայ միութիւն մը աւելցնել :

Ինչպէս 0,63578ին տեղ կրնանք գրել 0,6358 կամ 0,636 և կամ 0,64 :

Նոյնպէս 0,489ին տեղ՝ 0,49 կամ 0,5: Վերջապէս 0,999...ին տեղ 1 ամբողջ :

Է. Օգգան 13 զրշ 39 փարայէն 5 օգգա 117 տրամը ի՞նչ կ'ընէ :

Գործողութիւն:

$$\begin{array}{r}
 43,98 \\
 5,29 \\
 \hline
 42582 \\
 2796 \\
 6990 \\
 \hline
 73,9542 \\
 40 \\
 \hline
 38,1680
 \end{array}$$

59 փարային զրշի տասնորդականն է 0,975. բայց ասոր

տեղը առինք 0,98. 117 տրամին օգգայի տասնորդականն է 0,2925 որուն տեղն ալ առինք 0,29 և բազմապատկելով գտանք 74,9542:

Պատ. 73 զրշ 38 փարա :

Ը. Ոսկիին տրամը 44 զրշէն՝ 12 տրամ 3 տէնկ 2 չէկիրտէկը քանի՞ զրշ կ'ընէ :

Գործողութիւն:

$$\begin{array}{r} 12,875 \\ 44 \\ \hline 54500 \\ 54500 \\ \hline 566,500 \end{array}$$

5 տէնկը չէկիրտէկ ըրի և գտայ $5 \times 4 = 12$ որուն վրայ 2 չէկիրտէկն ալ աւելցնելով եղաւ 14 չէկիրտէկ՝ զոր տրամի տասնորդականի վերածելով եղաւ 0,875. ուստի 12,875ը 44ով բազմապատկեցի՝ արտադրեալն եղաւ 566,5:

Պատ. 566 զրշ և 20 փարա :

ՄԵԿ ԲԱՆԻ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ԴԻԻՐԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Խնդիր Ա. Օգգային գինը զրշի վրայ ծա-
նուցեալ ըլլալով՝ մէկ տրամին գինը գտնալ :

ԿԱՆՈՆ. Օգգային գինը 10ով բաժնել և
քանորդը փարա ընել :

Ինչպէս օխան 20 զրշ ըլլայ,
մէկ տրամը $20 : 10 = 2$ փարա կ'ըլլայ:

Նշնպէս օգգան 15 զրշ ըլլայ,
մէկ տրամը $15 : 10 = 1,5$ փարա կ'ըլլայ:

Վերջապէս օգգան 12,5 զրշ ըլլայ,
մէկ տրամը $12,5 : 10 = 1,25$ կ'ըլլայ:

Խնդիր Բ. Փոխադարձաբար տրամին գինը
փարայի վրայ ծանուցեալ ըլլալով մէկ օգգա-
յին գինը գտնալ :

ԿԱՆՈՆ. Տրամին գինը 10ով բազմապատ-
կել և արտադրեալը ղրշ սեպել :

Ինչպէս տրամը 5 փարա ըլլայ,
մէկ օգգան $5 \times 10 = 50$ ղրշ կ'ըլլայ :

Նոյնպէս տրամը 1,5 փարա ըլլայ,
մէկ օգգան $1,5 \times 10 = 15$ ղրշ կ'ըլլայ :

Վերջապէս տրամը 7,85 փարա ըլլայ,
մէկ օգգան $7,85 \times 10 = 78,5$ ղրշ կ'ըլլայ :

Խնդիր Գ. Օգգային գինը ղրշի վրայ ծա-
նուցեալ ըլլալով այսքան տրամին գինը
գտնալ :

ԿԱՆՈՆ. Օգգային գինը տրամներուն թը-
ւովը բազմապատկել, արտադրեալը 10ով
բաժնել և քանորդը փարա սեպել :

Ինչպէս օգգան 12 ղրշ ըլլայ,
25 տրամը $25 \times 12 = 300 : 10 = 30$ փարա կ'ըլլայ :

Նոյնպէս օգգան 6 ղրշ 24 փարա ըլլայ,
180 տրամը $6,6 \times 180 = 1188 : 10 = 118,8$ փարա կ'ըլլայ :

Վերջապէս օգգան 550 ղրշ ըլլայ,
24 տրամը $550 \times 24 = 8400 : 10 = 840$ փարա կ'ըլլայ :

Գիտելիք. Օգգային գինը ղրշի վրայ ծա-
նուցեալ ըլլալով 10 տրամին գինը գտնալ :

ԿԱՆՈՆ. Օգգան քանի ղրշ ըլլայ՝ 10 տրամն
ալ այնքան փարա կ'ընէ :

Ինչպէս օգգան 15 զըշ ըլլայ 40 տրամը 45 փարա կ'ընէ :

Նոյնպէս օգգան 15,5 զըշ ըլլայ՝ 40 տրամը 45,5 փարա կ'ընէ :

Վերջապէս օգգան 48 զըշ ըլլայ՝ 40 տրամը 48 փարա կ'ըլլայ :

Խնդիր Դ. Փոխադարձաբար՝ այսքան տրա-
մին գինը փարայի վրայ ծանուցեալ ըլլալով՝
օգգային գինը գտնել :

ԿԱՆՈՆ. Տրամներուն գինը 10ով բազմա-
պատկել, արտադրեալը տրամներուն թուովը
բաժնել և զըշ սեպել :

Ինչպէս 20 տրամը 55 փարայ ըլլայ,

մէկ օգգան $55 \times 10 = 550 : 20 = 17,5$ զըշ կ'ըլլայ :

Նոյնպէս 6 տրամը զըշ մ'ըլլայ,

մէկ օգգան $40 \times 10 = 400 : 6 = 66$ զըշ 26 փարա 2 ստակ կ'ըլլայ :

Վերջապէս 4 զըշով 52 տրամ բան առնուի,

օգգան $160 \times 16 = 1600 : 52 = 50$ զըշի կու գոյ :

Գիտելիք. 40 տրամին գինը փարայի վրայ
ծանուցեալ ըլլալով՝ օգգային գինը գտնել :

ԿԱՆՈՆ. 40 տրամին գինը զըշուշ սեպել :

Ինչպէս 40 տրամը 45 փարա ըլլայ,

մէկ օգգան 45 զըշ կ'ըլլայ :

Նոյնպէս 40 տրամը 25 փարա ըլլայ,

մէկ օգգան 25 զըշ կ'ըլլայ :

Վերջապէս 40 տրամը 45 զըշ ըլլայ,

մէկ օգգան $45 \times 40 = 1800$ զըշ կ'ըլլայ :

Խնդիր Ե. Էնտադէին կամ արշընին գինը
զըշուշի վրայ ծանուցեալ ըլլալով՝ մէկ ըուպին
գինը գտնել :

ԿԱՆՈՆ. Էնտադէին կամ արշընին գինը 5ով

բազմապատկել և արտադրեալը փարա սեպել :

Ինչպէս էնտագէն 7 զրուշ ըլլայ ,

մէկ բուպը $7 \times 5 = 35$ փարա կ'ըլլայ :

Նոյնպէս արշընը 12 զրուշ 20 փարա ըլլայ ,

մէկ բուպը $12,5 \times 5 = 62,5$ փարա կ'ըլլայ :

Վերջապէս արշընը 10 զրուշ ըլլայ ,

մէկ բուպը $10 \times 5 = 50$ փարա կ'ըլլայ :

Խնդիր 2. Մէկուն ամսականը զրուշի վրայ ծանուցեալ ըլլալով՝ օրականը գտնել :

ԿԱՆՈՆ. Ամսականը փարա և ագճէ սեպել :

Ինչպէս ամսականը 460 զրուշ ըլլայ ,

օրականը 460 փարա և 460 ագճէ կ'ըլլայ :

Նոյնպէս ամսականը 1000 զրուշ ըլլայ ,

օրականը 1000 փարա և 1000 ագճէ կ'ըլլայ :

Վերջապէս ամսականը 6000 զրուշ ըլլայ ,

օրականը 6000 փարա և 6000 ագճէ կ'ըլլայ, այսինքն 200 զըշ :

ԴԱՍ Ի.

ՎԵՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ

100. Երբ երկու քանակութիւն իրարու հետ բաղդատենք , այն բաղդատութենէն գտածնիս կ'ըսուի Վերաբերութիւն :

Քանակութիւնները իրարու հետ երկու կերպով կրնանք բաղդատել. Ա. երբ իւրարմէ որչափ աւելի կամ պակաս ըլլալը փնտռենք՝ Տարբերական կամ Թափանցական վերաբերութիւն կ'ըլլայ :

ինչպէս՝ 8ին 5ին հետ ունեցած տարբերական վերաբերութիւնն է 3, վասն զի $8-5=3$ և կը նշանակենք այսպէս $8:5$: նոյնպէս ալ $10:7$: վերջապէս $12:20$:

Երկրորդ, իրարմէ քանի անգամ մեծ կամ փոքր ըլլալը փնտռենք՝ Քանորդական կամ Երկրաբերութիւն կ'ըլլայ :

ինչպէս՝ 10ին 5ին հետ ունեցած քանորդական վերաբերութիւնն է 2, վասն զի $\frac{10}{5}=2$. եւ կը նշանակենք այսպէս $10:5$ նոյնպէս ալ $12:4$ վերջապէս $7:10$:

ԴԱՍ ԻԱ.

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

101. Երբ երկու իրարու հաւասար և նոյնատեսակ վերաբերութիւն իրարու քով գրենք՝ Համեմատութիւն կ'ըլլայ :

Թէ որ վերաբերութիւնները տարբերական ըլլան՝ համեմատութիւնը ճարճեալ կ'ըլլայ : Թէ որ քանորդական ըլլան՝ համեմատութիւնը Քանորդական կ'ըլլայ :

ինչպէս Ա. 7ին՝ 4ին հետ ունեցած տարբերական վերաբերութիւնն է 3, նոյնպէս ալ 12ին՝ 9ին հետ ունեցածն ալ 3 : Ուստի այս չորս թիւերը իրարու քով գրենք մէկ վերջա-

կէտով կ'ըլլայ տարբերական համեմատութիւն :

Այսպէս $7 \cdot 4 : 12 \cdot 9$ և կը կարդացուի
 Եօնը չորսին այնպէս կը համեմատի , ինչպէս փաստերէնո՛ւր ին-
 նին • Կամ ինչպէս Եօնը չորսին երեք է վէլէ , անանկ ալ փաս-
 տերէնո՛ւր իննէն երեք է վէլէ :

Բ. 8ին՝ 4ին հետ ունեցած քանորդական
 վերաբերութիւնն է 2 , նոյնպէս ալ 12ին՝ 6ին
 հետ ունեցածն ալ 2 , ուստի այս չորս թիւերը
 իրարու քով գրենք երկու վերջակէտով կ'ըլ-
 լայ քանորդական վերաբերութիւն :

Այսպէս $8 : 4 : : 12 : 6$ և կը կարդացուի
 ուրիշ չորսին այնպէս կը համեմատի , ինչպէս փաստերէնո՛ւր
 վեցին , կամ ինչպէս ուրիշ չորսին երկէնն է , անանկ ալ
 փաստերէնո՛ւր վեցին երկէնն է :

Ամեն համեմատութեան Ա. և Գ. եզրերը
 կ'ըսուին արտաքին և Բ. և Գ. եզրերը Քլնն :

ԴԱՍ ԻԲ.

ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

102. Ամեն տարբերական համեմատու-
 թեան արտաքիններուն գումարը միջիննե-
 րուն գումարին հաւասար է :

Ինչպէս $7 \cdot 2 : 10 \cdot 5$ համեմատութեան
 մէջ ունինք

$$7+5=2+10 \text{ կամ } 12=12$$

103. Թէ որ տարբերական համեմատութեան որ և իցէ մէկ եզրը անծանօթ ըլլայ, անոր տեղը Գ գիրը կը դրուի:

Ինչպէս $7 \cdot 2 : 10 \cdot Գ$ կամ $Գ \cdot 2 : 10 \cdot 5$ նոյնպէս $7 \cdot Գ : 10 \cdot 5$ վերջապէս $7 \cdot 2 : Գ \cdot 5$:

Տարբերական համեմատութեան մը անծանօթը գտնելու համար պէտք է

Թէ որ անծանօթը արտաքին ըլլայ՝ միջինները գումարել և ծանուցեալ արտաքինը հանել:

Ինչպէս $7 \cdot 3 : 10 \cdot Գ$ Գործ. $3 + 10 - 7 = 13 - 7 = 6$: Ուստի կը շարենք՝ $7 \cdot 2 : 10 \cdot 6$:

Թէ որ անծանօթը միջին ըլլայ՝ արտաքինները գումարել և ծանուցեալ միջինը հանել:

Ինչպէս $3,5 \cdot 5 : Գ \cdot 10,6$ Գործ. $3,5 + 10,6 - 5 = 14,1 - 5 = 9,1$: Ուստի $3,5 \cdot 5 : 9,1 \cdot 10,6$:

104. Տարբերական համեմատութեան մը միջինները իրարու հաւասար ըլլան համեմատութիւնը շարունակ դասերական կ'ըսուի և միջին եզրն արտաքիններուն թիւն դասերական է կ'ըսուի:

Ինչպէս $7 \cdot 5 : 5 \cdot 3$ նոյնպէս $10 \cdot 6 : 6 \cdot 2$:

105. Շարունակ տարբերական համեմատութեան միջինը գտնալու համար պէտք է

Արտաքիններուն գումարը միշտ 2ով բաժնել:

$$= 102 =$$

Ինչպէս $7 \cdot \Phi : \Phi \cdot 3$.

Գործողութիւն:

$$\frac{7+3}{2} = \frac{10}{2} = 5$$

Ուստի կը շարենք $7 \cdot 5 : 5 \cdot 3$.

Նոյնպէս $8 \cdot \Phi : \Phi \cdot 3$.

Գործողութիւն:

$$\frac{8+3}{2} = \frac{11}{2} = 5,5$$

Ուստի կը շարենք $8 \cdot 5,5 : 5,5 \cdot 3$.

106. Հետեւեալ տարրերական համեմալ տութեանց անժանօթները գտնել:

Ա. $8 \cdot 5 : 4 \cdot \Phi$

Բ. $7 \cdot 5 : \Phi \cdot 8$

Գ. $1 \cdot \Phi : 3 \cdot 4$

Դ. $\Phi \cdot 5 : 10 \cdot 7$

Ե. $3 \cdot \Phi : \Phi \cdot 5$

Զ. $4 \cdot \Phi : 11 \cdot 7$

Է. $3 \cdot 20 : \Phi \cdot 10$

Ը. $1,56 \cdot 100 : 2,56 \cdot \Phi$

Թ. $0,125 \cdot \Phi : 5 \cdot 6$

Ժ. $0,005 \cdot \Phi : 5 \cdot 6$

ԺԱ. $1,5 \cdot 2,5 : 3,5 \cdot \Phi$

ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Եւրոպացւոց ժամը 8 ըլայ՝ Տաճկաց ժամը քանի՞ կ'ըլլայ՝ կէս օրը ճէն հաշուելով :

Գործողութիւն :

$$\begin{array}{l|l} \text{Է. ԿՃ. Է. ԿՃ.} & \\ 12 \cdot 6 : 8 \cdot 8 & 6+8-12=14-12=2 \end{array}$$

Պատ. Տաճկաց ժամը 2 կ'ըլլայ :

Բ. Եւրոպացւոց ժամը 11 ըլլայ՝ Տաճկաց քանի՞ն կ'ըլլայ՝ կէս օրը ճէն հաշուելով :

Պատ. Տաճկաց 6 :

Գ. Եւրոպացւոց ժամը 7,5 ըլլայ՝ Տաճկաց քանի՞ն կ'ըլլայ՝ կէս օրը 5,5ն :

Պատ. Տաճկաց 1 :

Դ. Տաճկաց 3 ըլլայ՝ Եւրոպացւոց քանի՞ն կ'ըլլայ կէս օրը 4,5ն :

Պատ. Եւրոպացւոց 10,5 :

Ե. Տաճկաց 11 ըլլայ՝ Եւրոպացւոց քանի՞ն կ'ըլլայ կէս օրը 7,5ն հաշուելով :

Լուծումն :

Է. ԿՃ. Է. ԿՃ.

$$12 \cdot 7,5 : 8 \cdot 11$$

$$12+11-7,5=15,5 \text{ ժամ}$$

Այս 15,5 ժամը 12 ժամէն աւելի ըլլա-

$$= 104 =$$

լուն՝ 12ը հանենք կը մնայ 3,5, ուրեմն եւրոպացւոց ժամը 3,5 կ'ըլլայ :

2. Մէկը ունի երկու տեսակ ալիւր, առաջինին մէկ օխան 5 զրշ, երկրորդինը 9 զրշ, ասոնք հաւասարապէս իրար խառնէ օխան քանիի՞ կու գայ :

Գործողութիւն:

$$5 \cdot 9 : 9 \cdot 9 \quad \left| \quad \begin{array}{r} 5+9 \\ 2 \end{array} \quad \begin{array}{r} 14 \\ 2 \end{array} = 7$$

Պատ. Օխան 7 զրշի կու գայ :

3. Գտնել 13ին և 7ին միջին տարբերականը :

Պատ. 10 :

Ը. Հայր մը երեք տղայ ունի, առաջինին փարիքն է 13, երրորդինը 6, երկրորդինը առաջինէն ո՞րչափ սկսած է նէ՝ երրորդէն ալ այնչափ էվէլ է. ի՞նչ է երկրորդին տարիքը :

Պատ. երկրորդին տարիքը 9 տարի 6 ամիս :

ԴԱՍ ԻԳ.

ՔԱՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

107. Սմեն քանորդական համեմատութեան արտաքիններուն արտադրեալը միջիններուն արտադրեալին հաւասար է :

$$= 105 =$$

Ինչպէս $12 : 4 : : 6 : 2$ համեմատութեան մէջ ունինք

$$12 \times 2 = 4 \times 6 \text{ կամ } 24 = 24$$

108. Քանորդական համեմատութեան մը անձանօթը գտնալու համար պէտք է

Թէ որ անձանօթը արտաքին ըլլայ՝ միջինները բազմապատկել և ծանուցեալ արտաքինով բաժնել :

Ինչպէս , $8 : 2 : : 12 : \Phi$.

Գործողութիւն :

$$\frac{2 \times 12}{8} = \frac{24}{8} = 3$$

Ուստի կը շարենք $8 : 2 : : 12 : 3$:

Թէ որ անձանօթը միջին ըլլայ՝ արտաքինները բազմապատկել և ծանուցեալ միջինով բաժնել :

Ինչպէս $12,5 : 5 : : \Phi : 20$.

Գործողութիւն :

$$\frac{12,5 \times 20}{5} = \frac{125 \times 20}{50} = 50$$

109. Հետեւեալ քանորդական համեմատութեանց անձանօթները գտնալ :

Ա. $10 : 5 : : 4 : \Phi$

Բ. $20 : 16 : : \Phi : 5$

Գ. $13 : \Phi : : 6 : 8$

Դ. $\Phi : 1 : : 2 : 4$

Ե. $1,5 : 2,5 : : 3,5 : \Phi$

Զ. $4 : \Phi : : 11 : 7$

Է. $0,005 : 0,5 : : \Phi : 0,005$

Ը. $12,5 : 100 : : 1000 : \Phi$

Թ. $0,001 : 0,5 : : 500 : \Phi$

Ժ. $62,5 : 625 : : \Phi : 0,625$

ԴԱՍ ԻԴ.

ՊԱՐԶ ԵՐԻՑ ԿԱՆՈՆ

110. Խնդիր մը ըստ կանոնի քանորդական համեմատութեան շարելով լուծելու կանոնին կ'ըսուի Պարզ երից կանոն :

Խնչպէս ՚Յ էնտազէն 20 զըշ ըլլայ՝ 8 էնտազէն քանի՞ զըշ կ'ըլլայ :

111. Խնդիր մը համեմատութեան շարելու ատեն պէտք է դիտել որ այն խնդրոյն մէջ երկու պատճառ կայ և երկու հատ ալ եղելու լիւն (միշտ մէկ հատը անծանօթ) : Ուստի պէտք է պատճառին մէկը Ա. եզր ընել . իր եղելութիւնը Բ. եզր . նոյնպէս ալ միւս պատճառը Գ. եզր , և իր եղելութիւնը Դ. եզր , և յետոյ ըստ կանոնի լուծել :

Խնչպէս վերի խնդրոյն մէջ ՚Յ էնտազէն պատճառ է և 20 զըշը իր եղելութիւնն է ,

$$= 107 =$$

նոյնպէս ալ 8 էնտադէն պատճառ և ք ղըշն ալ իր եղելութիւնը, ուստի համեմատութեան կը շարեմ այսպէս.

Գործողութիւն:

$$\begin{array}{r} \text{էն. ղըշ} \quad \text{էն. ղըշ} \\ 5 : 20 : : 8 : \text{ք} \quad \frac{20 \times 8}{5} = \frac{160}{5} = 32 \end{array}$$

Պատ. 32 ղըշ կ'ըլլայ :

Ուրիշ օրինակ :

100 ղըշը 7,5 շահ բերէ՝ 5650 ղըշը քանի՞ ղըշ շահ կը բերէ :

Գործողութիւն:

$$100 : 7,5 : : 5650 : \text{ք} \quad \frac{7,5 \times 5650}{100} = 423,75$$

Պատ. 423,75 ղըշ շահ :

112. Գէորգի. Խնդիր մը համեմատութեան շարելու ատեն պէտք է գիտել որ պատճառները իրարու հետ նոյնասեռ ըլլան, նոյնպէս ալ եղելութիւնները, թէ որ չեն, պէտք է առաջ նոյնասեռ ընել և յետոյ համեմատութեան շարել :

Ինչպէս մէկը 100 ղըշով 56 արշըն պատմա առնէ, 350 ֆրանքով քանի՞ արշըն կ'առնէ :

Գործողութիւն:

Առաջ 350 ֆրանքը ղըշ կ'ընեմ 4,500

$$= 108 =$$

բազմապատկելով կ'ըլլայ $350 \times 4,5 = 1575$ զրշ,
յետոյ համեմատութեան կը շարեմ այսպէս.

Գործողութիւն:

$$\begin{array}{ccccccc} \text{ըշ} & \text{ար} & & \text{ըշ} & \text{ար} & & \\ 100 : 56 : : 1575 : \text{Ք} & & & 56 \times 1575 & & & \\ & & & \hline & & & 100 & & = 882 \end{array}$$

Պար. 882 արշըն :

ՊԱՐՁ ԵՐԻՑ ԿԱՆՈՆԻ ՎՐԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Քանի՞ զրշ գրամագլուխ դնելու է որ
տարին 100ին 5 զրշ շահով 560 զրշ շահ
առնեմ:

Գործողութիւն:

$$\begin{array}{ccccccc} \text{շ} & & \text{շ} & & & & \\ \text{Ք} : 560 : : 100 : 5 & & & & \frac{560 \times 100}{5} & & = 11200 \end{array}$$

Պար. 11200 զրշ գրամագլուխ :

Բ. 12 էնտաղէ պասման 40 զրշ ընէ՝ 20
էնտաղէն քանի՞ զրշ կ'ընէ :

Պար. 66 զրշ 26 փարա 2 ստակ :

Գ. 100 օխայ ածուխը 24 զրշ 20 փարա
ընէ 5680 օխան քանի՞ զրշ կ'ընէ :

Պար. 1391,6 զրշ :

Դ. 16 գործաւոր 200 տակառ շաքար
կրեցին, քանի՞ գործաւոր ըլլալու է որ 1350
տակառ շաքար կրեն (միեւնոյն ատենի մէջ) :

Պատ. 108 գործաւոր :

Ե. Բառարանի մը 5 երեսները համընդ
դրանք 560 բառ , քանի՞ բառ կ'ըլլայ բոլորը
երբ բառարանին երեսները 1250 հատ ըլլայ :

Պատ. 140000 բառ :

Զ. 15 ֆրանքով 5 օխայ մօմ առի , 100
օխայ մօմը քանի՞ զրշ կ'ընէ :

Պատ. 300 ֆրանք կամ 1350 զրշ :

Է. 100 թիւը անանկ երկու մասերու բաժ-
նէ որ իրարու այնպէս համեմատին , ինչպէս
3ը 7ին :

Պատ. 30 և 70 :

Ը. Անդամ մը 17 օխայ պանիրին 140 զրշ
տուի , երկրորդ անգամ միեւնոյն տեսակէն
24 օխային 197 զրշ 35 փարա տուինք , ո՞րը
աժան է :

Պատ. Առաջին անգամին աժան է :

Թ. Օխայ ու կէս միսը 7 զրշ 12 փարա է ,
10 օխայ 250 տրամը քանի՞ զրշ կ'ընէ :

Պատ. 51 զրշ 28 փարա :

Ժ. Վաճառական մը 450 տակառ շաքար
առաւ ամեն մէկը 125 զրշի , թէ որ միջնոր-
դին ամեն մէկ 100 զրշին 7 զրշ 20 փարա
տալ հարկ ըլլայ՝ բոլորին համար ի՞նչ վճա-
րելու է :

Պատ. 4218 զրշ 30 փարա :

ԺԱ. Երեք հոգի ընկեր եղան և վաստկեցան 12000 զրշ, առջինը գրաւ 20000 զրշ, երկրորդը 30000 զրշ, և երրորդը 40000 զրշ, ամեն մէկը իր գրաւածին համեմատ քանի՞ զրշ վաստակ պիտի առնէ :

Լուծումն :

Առաջ ամեն մէկուն գրաւները գումարեմ կը գտնեմ $20000 + 30000 + 40000 = 90000$. յետոյ համեմատութեան կը շարեմ այսպէս

$$90000 : 12000 : : 20000 : \Phi$$

$$90000 : 12000 : : 30000 : \Phi$$

$$90000 : 12000 : : 40000 : \Phi$$

Այս համեմատութիւնները լուծելով կը գտնեմ որ

Առաջինը պիտի առնէ	2666 զրշ	26 փր	2 ստկ
Երկրորդը	”	”	4000 ” 00 ” 0 ”
Երրորդը	”	”	5333 ” 13 ” 1 ”
	42000	”	00 ” 0 ”

ԺԲ. Թէ որ 45 հատ տախտակը 840 զրշ 30 փարա ըլլայ, 1050 զրշով քանի՞ տախտակ կրնանք առնել :

Պատ. 56 տախտակ :

ԺԳ. 20 մարդ 130 արշըն տեղ շինեն, հապա 1000 արշըն տեղը միեւնոյն ատենէն լըմնցընելու համար քանի՞ մարդ պէտք է :

$$20 : 130 : : \Phi : 1000$$

$$\frac{1000 \times 20}{130} = \frac{20000}{130} = 153,84$$

Պատ. 154 մարդ պէտք է, որոնց մէկը միւսներուն ամեն մէկուն բանաժին միայն 100 մասին 84ը պիտի բանի :

ԺԳ. Թօփ մը թուղթը որ 20 տէստէ է, կը ծախուի 30 զրշի. թէ որ տէստէով առնենք՝ ամեն մէկ տէստէն 1 զրշ 30 փարա կուտան, արդ եթէ տէստէով առնենք՝ տէստէ գլուխ քանի՞ փարա էվել տուած կ'ըլլանք :

Պատ. 10 փարա :

ԺԵ. 26 զրշի առած վաճառքնիս 29 զրշ 12 փարայի ծախսենք՝ հարիւրին ի՞նչ կը վաստկինք :

Պատ. 12 զրշ 12 փարա :

ԺԶ. 24 զրշի առնուած վաճառք մը 20 զրշ 32 փարայի ծախսենք՝ հարիւրին քանի՞ ֆնաս ըրած կ'ըլլանք :

Պատ. 13 զրշ 13 փարա 1 ստակ :

ԴԱՍ ԻԵ.

ԽՈՏՈՐՆԱԿ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

113. Երբեմն անանկ խնդիրներ կը պատահին որ թէպէտ երեք ծանուցեալ և մէկ

անծանօթ մը կը պարունակեն , բայց իրարու ուղիղ կերպով չեն համեմատիր հապա խոտորնակ կերպով , ան ատեն այն խնդիրը լուծելու կանոնին կ'ըսուի , խոտորնակ համեմատութիւն կամ խոտորնակ երկոյ կանոն :

Ինչպէս թէ որ չորս մարդ 6 օրէն գործ մը լրացընեն , հապա 8 մարդ քանի՞ օրէն կը լրացընեն :

Թէ որ այս խնդիրը ուղիղ համեմատութեամբ լուծենք կը գտնենք 12 օր , որն որ ինչպէս յայտնի է՝ սխալ է : Պատասխանը պիտի ըլլայ 5 օր :

114. ԿԱՆՈՆ. խոտորնակ համեմատութիւնները լուծելու համար պէտք է նախադաս մը իր յետադասովը բազմապատկել և միւս նախադասով կամ յետադասով բաժնել :

Ինչպէս վերի խնդիրը համեմատութեան շարենք՝ կ'ունենանք ,

$$\begin{array}{cc} \text{հ. օր} & \text{հ. օր} \\ 4 : 6 : & : 8 : 6 \end{array}$$

Նախադաս 4ը 6ով բազմապատկենք՝ կ'ըլլայ 24 զոր 8ով բաժնենք կը գտնենք 3 :

Պատ. 3 օրէն կը լրացընեն :

115. ԳԻՓԵԼԷ. խնդիրները համեմատութեան շարելէն ետքը՝ գծուարութիւնը կը մնայ հասկնալու թէ շարած համեմատութիւննիս ուղիղ է թէ խոտոր , ասիկայ որո-

$$= 113 =$$

չելու համար պէտք է հետեւեալ դիտողութիւնը ընել :

Ա. Թէ որ նախագասը մեծցրենք՝ իր յետագասն ալ մեծնայ, կամ Թէ երբ նախագասը պզտիկցրենք՝ իր յետագասն ալ պզտիկնայ՝ համեմատութիւնը ուղիղ կ'ըլլայ :

Ինչպէս, Թէ որ 100 զրշը 6 զրշ շահ բերէ, հապա 5670 զրշը քանի՞ շահ կը բերէ :

Լուծումն :

Համեմատութեան շարելով կ'ունենանք,

$$\begin{array}{cc} \text{րշ} & \text{շահ} \\ 100 & : 6 : : 5670 : \text{?} \end{array}$$

Նախընթաց 100 զրշին տեղը 200 զրշ ըլլար՝ 6 շահին տեղն ալ 12 շահ կ'ըլլար, կամ հարիւր զրշին տեղ 50 զրշ ըլլար՝ 6 շահին տեղն ալ 3 կ'ըլլար. ուրեմն այս համեմատութիւնը ուղիղ է. ուստի իր կանոնովը լուծենք՝ կը գտնենք

$$\frac{5670 \times 6}{100} = 34020 : 100 = 340,20$$

կամ 340 զրշ 8 փարա :

Բ. Թէ որ նախագասը մեծցունենք՝ յետագասը պզտիկնայ, կամ նախագասը պզտիկցրենք՝ յետագասը մեծնայ՝ համեմատութիւնը խտորնակ կ'ըլլայ,

ինչպէս, 40 մարդ 14 օրէն գործ մը
լըմնցընեն, հապա 50 մարդ քանի՞ օրէն մի և
նոյն գործը կը լըմնցընեն :

Լուծումն :

Համեմատութեան շարեւիկ կը գտնանք ,

$$\begin{array}{ccccc} \text{Տ.} & \text{օր} & & \text{Տ.} & \text{օր} \\ 40 & : 14 & : & 50 & : \text{Ք} \end{array}$$

Նախընթաց 40 մարդուն տեղ 80 մարդ
ըլլար՝ 7 օրէն կը լըմննար, կամ թէ 40 մար-
դուն տեղ 20 մարդ ըլլար 28 օրէն կը լըմննար,
ուրեմն այս համեմատութիւնը խոտորնակ է,
ուստի իր կանոնովը լուծենք՝ կը գտնանք ,

$$\frac{40 \times 14}{50} = 560 : 50 = 11,2$$

Կամ 11 օր 2 ժամ 24 վայրկեան :

Խառն օրինակներ :

Ա. Թէ որ 12 օրէն 40 մարդ պատ մը շի-
նեն, հապա 50 մարդ քանի՞ օրէն կը շինեն
միեւնոյն պատը :

Պատ. 9 օր 7 ժամ 12 վայրկեան :

Բ. 100 զրշը տարին 6 զրշ շահ բերէ՝ հա-
պա 5650 զրշ 24 փարան քանի՞ շահ կը բերէ :

Պատ. 339 զրշ 1,5 փարա գրեթէ :

Գ. Օրերը 12 ժամ եղած ատեն՝ գործ մը

3 օրէն լմնցաւ , թէ որ օրերը 8 ժամ ըլլար քանի՞ օրէն կը լմննար :

Պատ. 7 օր 6 ժամ :

Դ. 3 լիմնը 5 փարա ըլլայ , և 5 լիմնը 7 փարա ըլլայ ո՞րը աժան կ'ըլլայ :

Պատ. երկրորդը աժան կ'ըլլայ :

Ե. 1200 զրշ շահու տուինք և ժամանակէ մը ետքը 5000 զրշ շահ առինք , քանի՞ զրշ դնելու է որ միեւնոյն ժամանակէն 6000 զրշ շահ առնենք :

Պատ. 1440 զրշ :

Զ. 15000 զրշ շահու տուինք՝ 4 ամիսէն ետքը շահ մը առինք , միեւնոյն շահը 3 ամիսէն առնելու համար քանի՞ զրշ դրամա գլուխ դնելու է :

Պատ. 20000 զրշ :

Է. 8 մարդ գործ մը 17 օրէն լրմնցուցին , 11 մարդ 13 օրուկէսէն , որո՞նք աւելի աշխատասէր եղած կ'ըլլան :

Պատ. Աւջինները :

Ը. Այգի մը ունէինք որուն երկայնութիւնն էր 1200 արշըն , լայնութիւնը 800 արշըն , այս այգին ծախեցինք 10000 զրշի . ուրիշ այգիի մը երկայնութիւնը 1500 արշըն ըլլայ և լայնութիւնը 600 արշըն . քանի՞ զրշի ծախելու է :

Պատ. 9375 զրշ :

Թ. 10 արշըն 6 ըուպ չուխայ առինք , ու
ըուն լայնքն էր 1 արշըն 4 ըուպ . այս չու-
խային վրայ աստառ պիտի անցընենք որուն
լայնքն է 7 ըուպ , քանի՞ արշըն աստառ
կ'երթայ :

Պատ. 18 արշըն 3 ըուպ :

Ժ. 120 հատ ոսկի ունէինք որոնց ամեն
մէկը 42 ղըշ 24 փարա կ'արժէ , ասոնք ուրիշ
ոսկիներու հետ պիտի փոխանակենք , որոնց
ամեն մէկը 25 ղըշ 12 փարա կ'արժէ , վեր-
ջիններէն քանի՞ հատ առնելու է :

Պատ. 202,05 հատ ոսկի :

ԴԱՍ ԻԶ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

115. Շատ անգամ համեմատութեան վե-
րաբերեալ խնդիրներուն մէջ չորս եզրէն ա-
ւելի կը դտնուին . այսինքն վեց, ութը, տասը
և այլն . միշտ մէկ հատը անժանօթ . ահա այն
խնդիրները համեմատութեամբ լուծելու կա-
նանին կ'ըսուի Բաղադրեալ համեմատութեան :

Ինչպէս , թէ որ 100 ղըշը 3 ամիսէն 25
ղըշ շահ բերէ , հապա 3600 ղըշը 8 ամիսէն
քանի՞ ղըշ շահ կը բերէ :

ԿԱՆՈՆ. Բաղադրեալ համեմատութեան

խնդիրները լուծելու համար եզրերը որչափ
ալ շատ ըլլան՝ պէտք է դիտել որ եզրերէն ու
մանք առաջին պատճառ մը կը կազմեն, միւս
ներէն ոմանք առաջին պատճառին եղելու
թիւնը, նոյնպէս ալ մնացած եզրերէն երկ-
րորդ պատճառ մը և իր եղելութիւնը :

Արդ առաջին պատճառը կազմողները ի-
րարու քով գրելու է բազմապատկութեան
նշանով և համեմատութեան Ա. եզր ընելու է .
իր եղելութիւնը կազմողներն ալ երկրորդ եզր
միւս պատճառին մասերն ալ երրորդ եզր , և
իր եղելութիւնն ալ չորրորդ եզր :

Թէ որ Ք անժանօթը միջին ըլլայ , պէտք
է արտաքիններուն արտադրեալը միջիննե-
րուն արտադրեալովը բաժնել :

Թէ որ Ք անժանօթը արտաքին ըլլայ ,
պէտք է միջիններուն արտադրեալը արտա-
քիններուն արտադրեալովը բաժնել :

Ինչպէս վերի խնդիրը համեմատութեան
շարենք՝ կ'ունենանք ,

$$\begin{array}{ccc} \text{դրշ} & \text{ա} & \text{շահ} \\ 100 \times 5 & : & 25 : : 5600 \times 8 : \text{Ք} \end{array}$$

Որն որ լուծելով կ'ըլլայ ,

$$\frac{25 \times 5600 \times 8}{100 \times 5} = \frac{1120000}{500} = 2240$$

Պատ. 2240 ՂՂ :

$$= 118 =$$

Օրինակ Բ. Թե որ 12 մարդ 10 օրէն 12 արշըն երկայն և 5 արշըն բարձր պատ մը շինեն, հապա 24 մարդ 15 արշըն երկայն և 8 արշըն բարձր պատ մը քանի՞ օրէն կը շինեն :

Լուծումն:

$$\begin{array}{ccccccc} \text{Տ.} & \text{Շ.} & \text{...} & \text{...} & \text{Տ.} & \text{...} & \text{...} \\ 12 \times 10 & : & 12 \times 5 & : & : & 24 \times 8 & : & 15 \times 8 \end{array}$$

$$\frac{12 \times 10 \times 15 \times 8}{12 \times 5 \times 24} = \frac{14400}{1440} = 10 \text{ օր}$$

Պատ. 10 օր :

Գիտելիք. Գործողութեան դիւրութեանը համար կրնանք պէտք եղած պարզութիւնները կատարել :

Ինչպէս վերի լուծման մէջ $\frac{12 \times 10 \times 15 \times 8}{12 \times 5 \times 24}$

12 թիւերը 12ով կը բաժնենք կ'ըլլայ,

$$\frac{1 \times 10 \times 15 \times 8}{1 \times 5 \times 24}$$

Ասոր ալ 15ը և 5ը՝ 5ով բաժնենք կ'ըլլայ,

$$\frac{1 \times 10 \times 3 \times 8}{1 \times 1 \times 24}$$

Վերջապէս ասոր ալ 8 և 24ը՝ 8ով բաժնենք կ'ըլլայ,

$$\frac{1 \times 10 \times 3 \times 1}{1 \times 1 \times 3}$$

$$= 119 =$$

Եւ գործողութիւնը կատարելով կ'ըլլայ ,

$$\frac{1 \times 10 \times 3 \times 1}{1 \times 1 \times 3} = \frac{30}{3} = 10 \text{ ֆ}$$

Օրինակ Գ. 15 մարդ 10 օրէն օրը 10 ժամ աշխատելով 24 արշըն երկայն , 12 արշըն ու կէս լայն և 10 արշըն խոր խրամ մը փորեն , հապա 30 մարդ 20 օրէն օրը 8 ժամ աշխատելով 32 արշըն երկայն , 18 արշըն լայն խրամ մը փորեն՝ խորութիւնը քանի՞ արշըն եղած կ'ըլլայ :

Լուծումն :

Տ. Ը. Ժ. Է. լայն խոր Տ. Ը. Ժ. Է. լայն խոր
 $15 \times 10 \times 10 : 24 \times 12,5 \times 10 : : 30 \times 20 \times 8 : 32 \times 18 \times \text{Ք}$

$$\begin{aligned} \text{Ք} &= \frac{24 \times 12,5 \times 10 \times 30 \times 20 \times 8}{15 \times 10 \times 10 \times 32 \times 18} = \\ &= \frac{3 \times 125 \times 1 \times 30 \times 2 \times 4}{150 \times 1 \times 1 \times 4 \times 9} = \\ &= \frac{1 \times 5 \times 1 \times 30 \times 2 \times 1}{6 \times 1 \times 1 \times 1 \times 3} = \\ &= \frac{1 \times 5 \times 1 \times 5 \times 2 \times 1}{1 \times 1 \times 1 \times 1 \times 3} = \frac{50}{3} \end{aligned}$$

16 արշըն և 16 մատ :

ԽԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. 7 օխայուկէսը 40 զրշ ըլլայ՝ 5 օխայ
100 տրամը քանի՞ զրշ կ'ընէ :

ጠቅላይ 35 ጥያቄ ፡

Բ. Օխան 8 շրշ ըլլայ՝ 100 տրամբը քանի՞
փարա կ'ընէ :

Προσφ. 80 φησιν :

Գ. Էնտադէն 12 ՊՐԶ ԸԼԼԱՅ, ԸՄԼԱՊԸ քանի՞
ՊՐԶ կ'ընէ :

Պատ. 1 զմ. 20 փայլա :

Դ. 61500 զրշին տեղ 55670 զրշ առնենք՝
100ին ի'նչ փառս բրած կ'ըլլանք :

Պատ. 9 դր2 և դրեթէ 25 փարա :


Ե. 150 զրշով 23 զրշ 15 փարա փաստըկե,
յանք՝ 200 զրշով ալ 30 զրշ. որք չահաւէտ է:

Պատ. Առաջինը շահաւէտ է :

Զ. 1200 զինուոր 8 ամսուան պաշար ունէին, 5 ամիս իրենց պաշարը ուտելէն ետքը 300 զինուոր աւելցաւ, մնացած պաշարը 3 ամիս տեւելու համար ամեն մէկուն օրը ո՞րչափ պակաս տալու է:

Պատ. Օրը ամեն մեկուն $\frac{4}{5}$ բաժին տալու է, այսինքն առջի կերածնուն $\frac{1}{5}$ ը պակաս :

Է. 100 արշըն չուխայ առինք արշընը 45
դր 35 փալոյէն, այս չուխան ջուրը մտնա.



լով 7 արշըն 6 ըուպը պակսեցաւ, մնացած չուխային արշընը քանի՞ ծախելու է որ հաւրելին 5 զըշ 20 փարա վաստըկինք :

Պար. 52 զըշ :

Ը. 125000 զըշին 16ը պիտի կոտրենք և մնացածին ալ 100ին 45ը պիտի վճարենք՝ ո՞ր չափ վճարելու է :

Պար. 47250 զըշ :

Թ. Հինգ հատ սենեակ ունինք որոնց աւան մէկուն երկայնութիւնն է 5 արշըն 12 մատ, լայնքը 4 արշըն 6 մատ, և բարձրութիւնը 5 արշըն, այս սենեակին պատերը թուղթով պիտի զարդարենք, թուղթին լայնքն է 8 մատ՝ քանի՞ արշըն թուղթ առնելու է բոլոր պատերը գոցելու համար. (գուռներուն և պատուհաններուն տեղերն ալ մէկտեղ հաշուելով) :

Պար. 1463 արշըն և 23 մատ :

Ժ. 100 զըշը տարին 5 զըշ 20 փարա շահ բերէ՝ հապա 5000 զըշը 2 տարի 8 ամիս 15 օրէն քանի՞ զըշ շահ կը բերէ :

Պար. 744 զըշ և 31 փարա :

ԺԱ. Տարին 100ին 3էն դրամագլուխ մը քանի՞ տարիէն իր կրկինը կ'ըլլայ :

Պար. 33 տարի 4 ամիս :

ԺԲ. 12000 զըշը քանի՞ տարի շահու կենա

լու է որ տարին 100ին 6էն 5000 զրշ շահ բերէ :

Պար. 69 տարի 5 ամիս 10 օր :

ԺԳ. 5650 զրշ պարտք ունինք 2 տարիէն վճարելիք , 5 ամիսէն 5000 զրշ տանք՝ վաճաճ կ'ընենք թէ շահ , տարին 100ին 6 շահ սեւ պելով :

Պար. 170 զրշ 30 փարա շահ :

ԺԴ. 1560 տակառ շաքար առինք , ամեն մէկը 1200 զրշի . այս ստակին 100ին 3 զրշ 10 փարա մաքս տուինք . մնացածին ալ 100 զրշին 18 փարա միջնորդին , օխան քանիի՞ ծախելու է որ 100ին 13 զրշ 24 փարա վաստըկինք , գիտնալով որ ամեն մէկ տակառը 100 օխայ է :

Պար. 14 զրշ 4 փարա :

ԺԵ. Երկու հատ ջրշեղջ ունինք , առաջինին երկայնութիւնն է 5 արշըն 4 մատ , լայնքը 3 արշըն 18 մատ , և խորութիւնը 2 արշըն 16 մատ : Երկրորդին երկայնութիւնը 6 արշըն , լայնքը 4 արշըն 12 մատ և խորութիւնը 3 արշըն 20 մատ . թէ որ առաջինը 12000 օխայ ջուր պարունակէ , երկրորդը քանի՞ օխայ ջուր կը պարունակէ :

Պար. 24038 օխայ և 283 տրամ :



ՄՇՏՆԶԵՆԱԻՍՐ ԲԱԺԱՆՈՐԴԻ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՅ

Արտեմայ օրերդի եւ Նասիպի Յ. Խօրասանձեան.
Դարբիելի երանեան.
Գայլանէ տիկնոջ Նորատունկեան.
Գրիգոր Պատուելոյ փէտիմայձեան.
Երանուհի տիկնոջ Յ. Եէմէնիձեան.
Երանուհի օրերդի Ալբեան.
Խրիմյի Գէորգ Աղայէքով եւ Տիրուհի տիկնոջ.
Նիկողայոսի Մ. Զօրայեան.
Պաղտասար Պատուելոյ.
Տաքէսի Կարապետեան.
Տ. Մխիթար վարդապետի Արբայ.
Տ. Տ. Յակոբ Պատրիարքի Նալեան.

Այիքսան Յ. Խօրասանձեան.
Ահարօն վարպետեան.
Անդրանիկ Պէյ Կրճիկեան.
Անտօն Մալխասեան.
Բասգալ Յ. Մուրատեան (յերուսաղ.).
Բեդրակ Բադաստանեան.
Գառնիկ Յ. Յովակիմեան.
Գրիգոր Ա. փափագեան.
Գրիգոր Խուրտաձեան.
Գրիգորիկ Կ. Պայեան.
Գրիգոր Ս. Բարսեղեան.
Գրիգոր Տ. Գէորգեան Ատափաղարցի.
Գանիէլ Մարկոսեան.
Տ. Տ. ԵՍԱՅԷ Արքեպիսկոպոս եւ Պատուարք Ս. Երուսաղեմի.
Եսայի Մ. Անուխեան.
Լեւոն Մ. Գափամաձեան.
Խաչատուր Մակաղեան.
Տ. Խորեն վարդապետ Գալֆաեան.
Կարապետ Սաղաեան.
Ճանիկ Պէյլիքձեան.
Ճանիկ Ս. Ալամեան.
Մ. Յակոբ Աշրխեան (յԱղէքսանդրիա).
Մարկոս Ալաճալլեան Նախըւանցի.
Մարտիրոս Ա. Հարենց.
Մարտիրոս Թօղաթլեան.
Մկրտիչ Ճանրմեան.
Մկրտիչ Յ. Տամատեան.

Մկրտիչ Պէնտերլեան.
Մկրտիչ Ստեփանեան.
Յ. Արշակ եւ Ընկերք.
Յակոբ Թօղաթլեան.
Յակոբիկ Կ. Պալեան.
Յակոբ Ոսկան.
Յակոբ Ս. փէրվաղեան.
Յարութիւն Խաչատուրեան (Ի Լիոն).
Յարութիւն Մարգարեան.
Յովհաննէս Հովիւեան.
Յովհաննէս Յակոբեան.
Յովհաննէս Յ. Ամիրաղով.
Յովհաննէս Պօյաձեանց.
Յովհաննէս Սպարթալեան.
Յովսէփ Գափամաձեան.
Նիկողայոս Տ. Շմուռնեան.
Նշան Հարենց.
Պօղոս Մէրասնէտեան.
Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեանց
յԱրմաշ.
Ռուբէն Յ. Քիւրքձեան.
Սարգիս Գալուգձեան.
Սարգիս Մ. Գափամաձեան.
Սերոբէ Թաղաթեան.
Սիմօն Սիմօնովի.
Ստեփան Մ. Ամիրաղով.
Տիգրան Գարակօղեան.
Տիգրան Մ. Գափամաձեան.

THE UNIVERSITY OF CHICAGO

A MEMORIAL TO THE

MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE PHYSICAL SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE SOCIAL SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE NATURAL SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE HUMANITIES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE MEDICAL SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE AGRICULTURAL SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE ENGINEERING SCIENCES

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE ARTS

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE LAW

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE BUSINESS ADMINISTRATION

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE EDUCATION

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE JOURNALISM

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE MUSIC

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE THEATRE

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE FILM

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE RADIO

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE TELEVISION

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE COMICS

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE VIDEO

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE INTERNET

DECEASED IN 1914

AND TO THE MEMBERS OF THE FACULTY OF THE DIVISION OF THE WORLD WIDE WEB

DECEASED IN 1914

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԵԱՄԲ

ՏՊՈՒՍԾ ԴԱՍԱԳԻՐՔ

18000

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ Կամ
ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ԵՒ ՀԵԳԱՐԱՆ. Յօրինեաց
ՆԵՐՄԵՍ Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ. 46 երես գին 4 դրշ:
(Թ. Տպագրութիւն):

ՊԱՐՏՔ ՏՂԱՅՈՅ. Թարգմանեաց ՚ի Գաղղիա-
կանէ ՆԵԱՆ ՁՈՂԱՊԵԱՆ. 442 երես գին 4
դրշ. (Գ. Տպագր.):

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ՄԱՆԿԱՆՅ. Թարգմանեաց
՚ի Գաղղիականէ ՍՏԵՓԱՆ ՄՈԶԵԱՆ. 480 երես
գին 5 դրշ. (Բ. Տպագր.):

ԱՌՁԵՌՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ. Յօ-
րինեաց ԷԼ ՎԻՄԱԳՐԵԱՅ ՏՈՂՍԷՓ ԳԱԶԷՁԵԱՆ.
42 տախտակ գին 5 դրշ:

ՀԱՄԱՌՕՏ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Յօրինեաց
Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ. 90 երես գին 4 դրշ:

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ. Յօրինեաց ՍՏԵ-
ՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՅ. 422 երես գին 5 դրշ.
(Գ. Տպագր.):

ԴՊՐՈՒԹԻՒՆ Կամ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՆԵՐԷՆ. Յօրինեաց Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ.
256 երես գին 8 դրշ. (Բ. Տպագր.):

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՅՆԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.
Յօրինեաց Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ. 456 երես
գին 6 դրշ:

ՍԿԶԲՈՒՆՔ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ. Յօրինեաց
Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ. 520 երես գին 15 դրշ: